


Ա. Շիրիյան

Ղեկնող Արիճարի  
Հաճրէնասիրակալ  
Երեմիակ






# ԳԻՏԱ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

2(22)





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
Институт литературы и м. М. Абергина

С. Штуксин

Патриотическая  
поэзия  
Гевонда Алишана

Издательство АН Армянской ССР  
ЕРЕВАН · 1959

---

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
Մ. ԱՔԷՆՅԱՆԻ անվան Գրականության Ինստիտուտ

891.99.092 [Ա. Ի. Ե. 266]

Մ. Շարիկյան

Ղեկավար Ալիսանի  
Հաճրեւասիրական  
որոշիւն

A 319




Հայկական ՍՍՌԻ ԳԱ Հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ • 1959

Տպագրվում է Հայկական ՍՍՌ-ի Իտուրյունների ակադեմիայի  
Խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:





Դ. ԱԼԻՇԱՆ



## ԵՐԿՈՒ ԽՈՍԻ

Ղևոնդ Ալիշանն առանձնահատուկ տեղ ունի հայ դասական գրականության ու հայագիտության մեջ: Վաթսուն տարի տեղի իր ստեղծագործական կյանքի ընթացքում նա հանդես է եկել տարբեր ասպարեզներում, գրսևորելով իրեն որպես բանաստեղծ, արձակագիր, հայագետ, պատմաբան, աշխարհագրագետ, թարգմանիչ: Նա տվել է մեծ արժեք ներկայացնող գործեր: Շնորհիվ այսպիսի արժեքներով նրա բազմաթիվ հոդվածները վերաբերում են հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներին, և նրանց մի մասը մինչև այսօր էլ չեն կորցրել իրենց արժեքը:

Մեծ է Ալիշանի դերը նաև հայ գեղարվեստական գրականության ասպարեզում: Իր բանաստեղծական գործունեությունն սկսելով որպես Մխիթարյան միաբանության նախորդ հեղինակների

գրական տրագիցիաները շարունակող հեղինակի։ Ալիշանն աստիճանաբար հակադրվեց Մխիթարյան միաբանության գրական ուղղությանը՝ կլասիցիզմին, և իր լավագույն գործերով ուղի հարթեց սոմանադիմի համար՝ դառնալով նրա հիմնադիրներից ու առաջին ներկայացուցիչներից մեկը։

Ալիշանը իր ամբողջ կյանքում, ապրելով ու ստեղծագործելով հայրենի բնաշխարհից և ժողովրդից հեռու, տվեց մի շարք հայրենասիրական բանաստեղծութիւններ ու պոեմներ, որոնք գրական փառք բերեցին հեղինակին և ջերմորեն ընդունվեցին ժամանակակիցների ու հաջորդների կողմից։ Ալիշանի մասին սիրով ևն արտահայտվել հայ գրականության խոշոր ներկայացուցիչներ Ադայանը, Թումանյանը, Վարուժանը և ուրիշներ։

Անցյալում Ալիշանի գեղարվեստական ժառանգությունը հանգամանակից սուսումնասիրության գրեթե չի արժանացել։ Գրվել ևն միայն հոդվածներ, գլխավորապես հորելյանի (1890) և մահվան (1901) առիթներով, և, հասկանալի է, որ գրանք միայն գրվատական բնույթ ունեն։ Սովետական դիտնականներից՝ արժեքավոր է Ա. Տերտերյանի «Ալիշանը և հայրենասիրութիւնը» սուսումնասիրութիւնը։

Սույն գրքույկում անգրադարձել ենք Ալիշանի պոեզիային, հիմնականում կանգ առնելով նրա հայրենասիրական բանաստեղծութիւնների վերլուծության վրա։

Քերովրե (հետագայում՝ Ղևոնդ) Պետրոսի Ալիշանյանը ծնվել է 1820 թ. հունիսի 6 (18)-ին, Պոլսում, դրամագետ-հնահավաքի ընտանիքում: Կյանքի վերջին տարիներին արքունի սեղանավոր դարձած Պետրոսը (1775—1834) 1827 թվականի դեկտեմբերին ընտանիքով Պոլսից աքսորվում է Եվգոկլիա, որտեղից, աղքատության դուռը հասած, վերադառնում 1830 թվականին: Պետրոսը, ընդունելով այդ ժամանակ Պոլսում գտնվող Մխիթարյան միաբանության անդամ՝ հայագետ Մկրտիչ Ավգերյանի առաջարկությունը, որոշում է իր երկու որդիներին ուղարկել Վենետիկ՝ Մխիթարյանների մոտ ուսումնառության: 1832 թվականի մայիսին Քերովրե և Սերովրե (1822—1903) Ալիշանյանները Մկրտիչ Ավգերյանի առաջնորդությամբ դուրս են գալիս Պոլսից և նույն թվականին հասնում ս. Ղազար:

Քերովրե Ալիշանյանը հինգ տարի սովորում է Նորընծայարանում (1832—1837) և ապա չորս տարի Բարձրագույն կրթարանում (1837—1841. հայտնի է նաև Վարժարան անվամբ): Նա 1838 թվականին, վերամկրտվելով Ավարայրի նշանավոր հերոսներից մեկի՝ Ղևոնդի անունով, ընդունվում է Մխիթարյան միաբանության անդամ և հետագայում այդ անունով էլ հայտնի դառնում ընթերցող ու գիտական հասարակայնությանը: Մինչդեռ նրա կղրայրը, տաքարյուն ու դյուրազրդիտ բնավորության պատճառով չհամապատաս-

խանելով միաբանության պահանջներին, 1836  
թվականին վերադառնում է Պոլիս:

Ուսման ընթացքն ավարտելուց հետո, 1841  
թվականից Ալիշանն սկսում է դասավանդել Ռա-  
ֆայելյան վարժարանում, 1843 թվականի հունվա-  
րից դառնում է հիշյալ վարժարանի ուսումնասյե-  
տը (ուսմասավար), իսկ 1848 թվականի մայիսին  
նշանակվում է նույն վարժարանի տեսուչ: Նա  
«Բաղմավեպ» հանդեսի խմբագրական հանձնաժո-  
ղովի անդամ էր, իսկ 1849—1851 թվականներին  
դառնում է նրա խմբագիրը, շարունակելով, միա-  
ժամանակ, դասավանդել վարժարանում:

Խմբագիր եղած տարիներին Ալիշանն աշ-  
խատում էր հասնել այն բանին, որ «Բաղմա-  
վեպ»-ը որքան հնարավոր է ավելի մոտ կանգնած  
լինի հայ ժողովրդի կյանքին, նրա հոգևոր կուլ-  
տուրային: Նա հնարավորին չափ մեծ տեղ էր տա-  
լիս Հայաստանի ներկայի և հատկապես անցյալի  
մասին գրված գործերին, տպագրում էր «ուսմա-  
կան» երգեր, պատմա-աշխարհագրական ուսումնա-  
սիրություններ, հայագիտական աշխատություններ,  
բանաստեղծություններ և այլն: Մինչև իր կյանքի  
վերջին տարիները Ալիշանը շարունակում էր հոգ-  
վածներ և ուսումնասիրություններ տպագրել «Բաղ-  
մավեպ»-ում, ընդ որում հազվագյուտ չեն ամսագրի  
այն համարները, ուր նա հանդես է եկել երկու,  
նույնիսկ երեք գործերով:

1850 թվականին Հոռոմ մեկնելու պատճառով

Ալիշանն ազատվում է Ռաֆայելյան վարժարանի տեսչի պարտականությունից: Հստակ ուսումնասիրելով Վատիկանի հայկական ձեռագրերը, նա վերադառնում է Վենետիկ և շարունակում դասավանդել Ռաֆայելյան վարժարանում: 1851 թվականին Ալիշանը գործուղվում է Լոնդոն, Ռաֆայելյան վարժարանի հետ առնչվող ֆինանսական միջանի հարցեր լուծելու համար: Նա ճանապարհին այցելում է Վիեննա և Բեռլին: Լոնդոն հասնելուց հետո տարբեր առիթներով մեկնում է Փարիզ, Բրյուսել, լինում պատմական Վաթերլոյի դաշտում, կապեր հաստատում եվրոպական դիտնականների հետ (Վինտչման, Չախաու, Պետերման, Բենո): Հիշյալ քաղաքներում նա ամենուրեք որոնում է հայկական ձեռագրեր, ուսումնասիրում և արտագրում դրանցից հազվագյուտ արժեք ներկայացնողները:

Մոտ մի տարվա շրջադաշնությունից հետո, 1852 թվականին Ալիշանը վերադառնում է Վենետիկ և որոշ ժամանակ անց գործուղվում Փարիզ: Նա չորս ամիս անց է կացնում ճանապարհորդության մեջ, վերադարձին այցելում Լիոն, Ճենովա, Միլան քաղաքները և նույն թվականին վերադառնում Վենետիկ:

Այստեղ շարունակելով դասավանդելը, նա միաժամանակ մեծ եռանդով նյութեր է հավաքում իր աշխատությունների համար, ուսումնասիրում եվրոպական ու ասիական մի շարք լեզուներ, Հա-

յաստանում գտնվող իր բազմաթիվ ծանոթներին  
խնդրում է արտագրել իրեն հարկավոր ձևադրերը,  
լուսանկարել պատմական արժեք ունեցող հնու-  
թյունները և այդ ամենն ուղարկել իրեն: 1858 թը-  
վականին Ալիշանը նորից գործուղվում է Փարիզ՝  
Մուրադյան վարժարանում դասավանդելու համար,  
և 1859 թվականից դառնում է այդ վարժարանի  
տեսուչը: Նրա տեսչության օրոք Մուրադյան վար-  
ժարանը մեծ բարգավաճման է հասնում և այս-  
տեղ այցելած Միքայել Նալբանդյանը դրվատան-  
քով է խոսում վարժարանի ու նրա տեսչի մասին,  
որի հետ նա նամակագրական կապի մեջ էր:

1861 թվականին Ալիշանը հետ է կանչվում  
վանք, իսկ 1866 թվականից նշանակվում Վենետիկի  
Ռաֆայելյան վարժարանի տեսուչ: Նրա տեսչության  
տարիներին վարժարանը համարվում էր Իտալիայի  
լավագույն դպրոցներից մեկը: «Դպրոցի ամբողջ  
կազմակերպության և ուղղության վրա տիրում էր  
հայր տեսչի՝ Ալիշանի ոգին, — գրում էր Գրիգոր  
Արծրունին, որն այդ ժամանակ գտնվում էր Վե-  
նետիկում, — դպրոցն ուսումնասիրած լինելով կա-  
րելի էր դադափար կազմել նրա ղեկավարի ուղղու-  
թյան, բնավորության ու լայն համամարդկային  
գաղափարների մասին: Ալիշանի անխարդախ, հա-  
մակրելի, անկեղծ բնավորությունը, նրա լայն, մար-  
դասիրական և հայրենասիրական անձնանվեր հան-  
ճարը կերպարանավորվում էր դպրոցի թև ամ-

քողջութիւն, և թե՛ նրա յուրաքանչյուր մանրամասնութիւն մեջ»<sup>1</sup>:

1862 թվականին Ալիշանն աղատվում է տեւա-  
չի պարտականութիւնից և մինչև իր կյանքի վեր-  
ջին տարիները զբաղվում ստեղծագործութեամբ՝  
չվարելով ոչ մի պաշտոն: Այդ ժամանակաշրջան-  
քում մեկը մյուսի հետեից երևան են գալիս Ալի-  
շանի կապիտալ մենագրութիւնները, որոնք որ-  
պես գիտնականի հռչակեցին նրան: Դրանցից են՝  
«Քաղաքական աշխարհագրութիւն նկարացոյց  
պատկերօք» (1853), «Նշմարք և նշխարք Հայաս-  
տանի» (1870 թ., թարգմ. ֆրանսերեն 1872 թ.,  
գերմաներեն՝ 1893 թ., անգլերեն՝ 1875 թ.), «Շը-  
նորհալի և պարագա յուր» (1873), «Շիրակ» (1881),  
«Սիսուան» (1885 թ., թարգմ. ֆրանսերեն  
1899 թ.), «Այրարատ» (1890), «Սիսական» (1893),  
«Հայրուսակ» (1895), «Հայ-Վենետ» (1896 թ.,  
համառոտված թարգմանութիւն իտալերեն՝ նույն  
թվականին) և բաղմաթիւ այլ գործեր, որոնք  
մտել են հայագիտութեան ոսկե ֆոնդի մեջ և  
փաստական նյութի տեսակետից խոշոր արժեք են  
ներկայացնում: Ոչ պակաս արժեքավոր գործեր է  
տվել Ալիշանը գեղարվեստական ստեղծագործու-  
թիւն ու թարգմանութիւնների ասպարեզում: 1852  
թվականին Վենետիկում հրատարակվում է «Ծաղ-  
կաքաղ քերթողաց անգղիացւոց» ժողովածուն, ուր

<sup>1</sup> «Մշակ», 1890, № 49—50:

նա թարգմանություններ էր ղևտեղել Բայրոնից, Պոպպից, Գրեյից, Միլտոնից և ուրիշներից: 1857 — 1858 թվականներին հրատարակվում են նշանավոր «Նուագք»-ների հինգ հատորները (բոլոր հատորները հետագայում վերահրատարակվել են), որոնք պարունակում են մոտ 350 անուն գործեր: 1860 թվականին «Իտալիա» խորագրով հրատարակվում է Բայրոնի «Չալլո Հարոլդ» պոեմի չորրորդ երգի թարգմանությունը, կատարված Ալիշանի կողմից, որը, չնայած գրաբար լինելուն, լավագույն թարգմանությունների շարքն է դասվում: 1866 թվականին հրատարակվում է «Նվեր տղայոց» արձակ գեղարվեստական գործը: 1869 — 1870 թվականներին հրատարակվում են «Հուշիկք հայրենյաց հայոց»-ի երկու հատորները, որ սկսած 1862 թվականից, հատվածաբար լույս էր տեսնում «Բազմավեպ»-ում: 1871 թվականին առանձին գրքուկով հրատարակվում է Շիլլերի «Երգի դանդակն»-ի Ալիշանի գրաբար թարգմանությունը, և այլն:

Հիշյալ և ուրիշ աշխատությունների հրատարակումով Ալիշանն աստիճանաբար համակարգապահան ճանաչում է ստանում: 1886 թվականին ֆրանսիական ակադեմիան նրան շնորհում է Պատվո լեգիոնի շքանշան: 1887 թվականին նա ընտրվում է Իտալիայի Ասիական ընկերության պատվավոր անդամ, 1894 թվականին՝ Մոսկվայի հնարանական ընկերության անդամ: 1896 թվականին

Պետերբուրգի հնախոսական ընկերութիւնը Ալիշանին ընտրում է իր պատվավոր անդամների թիւում, իսկ 1897 թվականին ընտրվում է Ենայի Փիլիսոփայական ակադեմիայի անդամ և այլն: Ալիշանին բարձր են գնահատել հայագիտութեան խոշորագույն ներկայացուցիչների կարրիերը, Վինտրշմանը, Բաումգարտենը, Բրոսսեն, Վասելովսկին, Բրյուսովը և շատ ուրիշներ:

1901 թ. նոյեմբերի 9 (22)-ին սրտի պայթիւնից վախճանվեց Ալիշանը և թաղվեց ս. Ղազար կղզում, ամելի քան 40 (թարգմանութիւններն էլ հաշված՝ մինչև 70) հատորանոց գրական ժառանգութիւն թողնելով հայ ժողովրդին:

\* \* \*

Թե կոնկրետ ո՞ր թվականից է սկսել ստեղծագործել Ալիշանը՝ դժվար է ասել: Նրա կենսագիր Ս. Երեմյանը նշում է, որ դեռևս Նորընծայտրանում սովորելիս նա գրում էր բանաստեղծութիւններ և կարգում հանդեսների ժամանակ: Այդ կարգի գործերից մեզ ոչինչ չի հասել, և հավանորեն գրանց ինքը՝ հեղինակն էլ առանձնապես չի արժեքավորել: Ալիշանի՝ մեզ հասած սկզբնական շրջանի մի քանի բանաստեղծութիւնները գրված են 1839 թվականին, իսկ որպես ձևավորված բանաստեղծ նա հանդես է դալիս 1840 թվականից, այսինքն այն ժամանակվանից,

կրք սովորում էր Բարձրագույն կրթարանում: Դեռ Մխիթար Սեբաստացու օրոք հիմնադրված այս հաստատութիւնն ուներ մեկ նպատակ, պատրաստել հնազանդ ու խոնարհ աշակերաններ, որոնց «ամբողջ կյանքը պիտի ըլլա տրված հրամաններու գործադրութիւնը» (Ա. Արփիարյան):

Սակայն Վարժարանի այս ծանր սեփմը թեև ունեցավ իր անժխտելի ազդեցութիւնն Ալիշանի վրա, բայց չկարողացավ նրան մինչև վերջ կտրել արտաքին աշխարհից: Քսանամյա երիտասարդ բանաստեղծը, որի զգայուն ու վշտոտ սրտում արդեն բուն էր դրել մաշող կարոտը գեպի իր հեռավոր հայրենիքը, առաջին իսկ գործերում սկսեց տեսնուցանքով երգել ազատ կյանքը, բնութիւնը, անդորր գիշերը, խոխոջացող առվակը, գիշերային կամ լուսարացի զով քամին, շնկշնկացող անտառը և այլն: Այս հանդամանքը որոշակիորեն նկատվում է «Երգք հանգրուանաց» խորագիրը կրող բանաստեղծաշարի յուրաքանչյուր ոտանավորն ընթերցելիս: Հիշյալ խորագրի ներքո գետեղված 34 գործերի մեծ մասն աչքի են ընկնում իրենց անմիջականութեամբ, անկեղծութեամբ ու թարմութեամբ (տե՛ս «Առ դեփիւռ ընդ ընդուզենեալ», «Արուսեակ», «Լուսին», «Գիշեր», «Լերինք» և այլն): Սրան միանում է նաև թախիծն ու տրտմութիւնը:

1843 թվականի հունվարից, Գ. Ալվազովսկու նախաձեռնութեամբ և խմբագրութեամբ, սկսում է հրատարակվել «Բազմավեպ» հանդեսը, որի էջն-

րում իր գրական գործունեութիւնն է սկսում Ալի-  
շանը: Այստեղ տպագրված նրա գործերը, որոնք  
նույնպէս գրված են գրաբարով, համեմատաբար  
ավելի աշխարհիկ բնույթ ունեն և, նախորդի նը-  
ման, պատկերում ու գրվատում են բնու-  
թիւնը: Գեղեցիկ պատկերների ու համեմատու-  
թիւնների միջոցով հեղինակը նկարագրում է գար-  
նան ամիսները, բացահայտում նրանց դերը, նը-  
շանակութիւնը և այլն:

Սակայն Ալիշանի սկզբնական շրջանի ստեղ-  
ծագործութեան գերակշռող մասը կրօնական բնույթ  
ունի: Նա ասածուն ու սրբերին նվիրել է բազմա-  
թիւ ու բազմապիսի բանաստեղծութիւններ,  
աղոթքներ, մաղթանքներ, ներբողներ, որոնք  
անհրաժեշտ տուրք էին ժամանակին ու միջա-  
վայրին և որոնք այսօր, հասկանալի է, ոչ մի  
արժեք չունեն մեզ համար:

Ընդհանուր գծերով այսպիսին է Ալիշանի  
սուազին շրջանի ստեղծագործութեան բնութա-  
գրութիւնը: Վանական միջավայրում, աղոթքնե-  
րի ու կրօնական ջերմեռանդութեան մեջ մեծա-  
ցած բանաստեղծը գեղեցիկ վերջնականապէս չէր  
կտրվել ուսուցիչից: Մի գգայուն նյարդով  
այնուամենայնիւ նա կապված էր արտաքին աշ-  
խարհի ու բնութեան, իր հարազատների ու հեռա-  
վոր, սիրելի հայրենիքի հետ: Եթէ չլիներ այդ  
կապը, Ալիշանն իր գրական գործունեութեան հա-  
ջորդ շրջանում չէր կարող ստեղծել մի շարք

բարձրարժեք գործեր, որոնք նրան դարձրին հայ պոեզիայի նահապետը:

\* \* \*

Ալիշանի պոեզիայի երկրորդ՝ ամենահարուստ ու բազմազան շրջանն սկսվում է 1847 թվականի կեսերից, երբ «Բազմավեպ»-ում տպագրվում է նրա «Հայոց աշխարհիկ» բանաստեղծութունը՝ «Նահապետ» ստորագրությամբ:

Առաջինը, որ հենց սկզբից աչքի է ընկնում վերոհիշյալ բանաստեղծության մեջ, այդ նրա լեզուն է: Եթե սկզբնական շրջանում երիտասարդ վարդապետը գրում էր այնպիսի ծանրամարս գրաբարով, որ առանց լուրջ ճիգերի ու բառարանի անկարելի էր լրիվ հասկանալ, ապա իր ստեղծագործության երկրորդ շրջանից սկսած Ալիշանը գրում է աշխարհաբարով, որը թեև բոլորովին դերձ չէր գրարարյան ձևերից, սակայն անհամեմատ ավելի մատչելի էր ընթերցողներին: Այս հանդամանքը մի ամբողջ գլխով Ալիշանին բարձրացրեց իր ժամանակակիցների համեմատությամբ: Իբրև իր դարաշրջանի այրող պահանջներն ըմբռնող մարդ, նա հասկացավ, որ ժողովրդի հետ խոսելու համար անհրաժեշտ է գրել «ոսակորենով», թեև վերջինիս նկատմամբ նա առանձնապես դրական վերաբերմունք չուներ: Ալիշանն իր ընտիր բանաստեղծությունները գրեց աշխարհաբար, մի հանդամանք,

որով պարզ կերպով ցույց տվեց իր ճիշտ կողմ-  
նորոշումը լեզվի հարցում: Միանգամայն այլ է  
Ալիշանի ստեղծագործական դիմանկարը աշխարհ-  
հարար գրված գործերում: Դժվար ըմբռնելի, նման  
հնչյունների կրկնման հետեանքով բառերի ժխտ-  
բով հազեցած գործերի փոխարեն հանդես են դա-  
լիս մեղմ, հանդարտ, հուզաթաթալ բանաստեղ-  
ծություններ: Հայրենիքի հանդեպ ունեցած սիրով  
ու քնքշությամբ ի ջերմ սրտի տրոփումն է զգաց-  
վում «Նահապետ» ստորագրությունը կրող հա-  
մարյա ընդր բանաստեղծություններում:

Հայո՛ց աշխարհիկ, գարունդ է հասել,  
Ահա գեղեցիկ գարուն քո եկել,  
Ո՛վ դու ի վաղուց մոռցված հայրենիք,  
Ո՛վ դու իմ սրտիս անմոռաց տեղիք,  
Ահա գարունիկդ հղսել է, հասել  
Ավաղ Մասյաց ծայրն ընդ քեզ հաշտ հայել:

Անհուն բերկրանքով, ջերմագին սիրով, պարզ  
ու անպաճույճ տողերով բանաստեղծը կրգում է  
հայրենի երկրի շքեղ գարունը: Լեռներն ու հո-  
վիաները գեղատեսիլ հարսերի նման զարդարվել  
են երփներանգ գույներով, կապույտ սարերը դը-  
լուխներին անմահական ծաղիկներից գույնզգույն  
պսակներ են կապել, գետերի եզրերին բացվել են  
իրենց պայծառ գեղեցկությամբ հմայող չքնաղ  
շուշաններն ու կարմիր վարդերը: Մի տեղ սա-  
րյակն է անմեղ հաղանքով սկսել իր թավիչ երգերը,  
մի այլ տեղ ուրախ հափշտակով արտույան է



ճախրում ու ասես ավետում դարնան գալուստը:  
Աշխույժ խայտալով դեպի կանաչապատ դաշտերն  
են վազում չարաճճի դառներն ու ուլիկները, ամ-  
բողջ բնությունն ասես ուրախանում է ձմռան  
կապանքներից ազատագրվելու համար:

Բայց չքնաղ ու գեղատեսիլ բնությունը ուրա-  
խության հետ մեկտեղ դառը վշտի արտասուքներ  
է քամում ալեղարդ Նահապետի աչքերից, որով-  
հետև օտար նվաճողները ճնշում ու ոչնչացնում  
էին հայ ժողովրդին, կեղեքում, անլուր տանջանք-  
ների ենթարկում նրան: Այդ հանդամանքը խոր  
վիշտ է պատճառել բանաստեղծին.

Բայց ափսո՛ս հիմիկ, որ շար թըշնամիք,  
Իսկի չեն խնայել Հայոց աշխարհիկ,  
Եկեղեցիք, վանք, դրատուն, դարպաս,  
Ձարկել են թըրով հըրով դաս ու դաս.  
Ձաղզն ընչոք տեղոք քանդել ու գերել,  
Դեմ չորս հովերուն տըվել ու ցըրվել.  
Ավա՛ղ քեզ, ավա՛ղ, Հայոց աշխարհիկ  
Տուն երկնանման, փըլած տաղվարիկ...

Չնայած այս բոլորին, ավերված, հրի ու սրի  
ճարակ դարձած հայրենիքը հավերժ սիրելի ու  
պաշտելի է Նահապետի համար: Նա իր հոգու-  
ամբողջ ուժով դատապարտում է այն մարդկանց,  
որոնք մտածում են իրենց հայրենիքից հրաժար-  
վել, կամ, որ ավելի սարսափելի է, դավաճանել  
նրան:

Հայրենիքը սիրելի ու անսխալ սիրելի է, ինչ  
էլ որ լինի, և ինչպիսին էլ լինի, այսինքն՝

Քանց օտար վարդ՝ քաղցը հայրենյացն է փուշ:

Գեղատեսիլ ու աննման դարնան Ֆոնի վրա  
պատկերելով ավերված Հայաստանը, հեղինակն  
այդ հակադրության միջոցով ավելի է շեշտում իր  
հեռավոր հայրենիքի մռայլ, արյունոտ իրականու-  
թյունը: Այս հակադրությունն ավելի է ուժեղա-  
նում, երբ հայրենասեր բանաստեղծն իրեն ներ-  
կայացնում է որպես դառամյալ մարդ, որպես ծեր,  
«ծաղիկ վաղանցուկ», որը, սակայն, անխարդախ  
սիրով սիրում է իր հայրենիքն ու տենչում նրա  
ազատությունը.

Բայց Նահապետի ի՞նչ ասեմ, ծերուկ,  
Որ եմ քաջ դամեն ծաղիկ վաղանցուկ,  
Իմ դարունս անցել ու հասել աշուն,  
Ցամքած տերևուկս ըսպասեմ հոփուն.  
Թե ե՞րբ ի լերանց ծոցուն փրչե խոր  
Ջրդե անկըսկիծ դիս ի մահուն ձոր:

Այսպես է ներկայանում իր ընթերցողներին  
Ալիշան-Նահապետը: Եվ պանդուխտ բանաստեղծի  
վերջին ու միակ իղձն է թաղվել հայրենի հողում.

Ծեր Նահապետիդ տո՛ւր կահուղ հողիկ,  
Որ քեզ պինդ սիրեց, Հայո՞ց աշխարհիկ:

Վերոհիշյալ ստեղծագործության կապակցու-  
թյամբ հետաքրքրական է մի ուրիշ հանդամանք:  
«Բազմավեպ»-ը բանաստեղծության վերջում կցում  
է մի ուշադրալ ծանոթագրություն: Անվերապահո-

րեն «Հայոց դաշտերի Վիրգիլիոս կամ Հոմերոս» հայտարարելով «Հայոց աշխարհիկ»-ի հեղինակին, նշվում է, որ վերջինիս կյանքն ու գործունեութիւնը հիմնականում անհայտ է մնացել հաջորդների համար, որ միայն նրա մի քանի բանաստեղծութիւններն են պահպանվել զանազան ոսկեփորիկների ու տաղարանների մեջ և այդպես հասել մինչև մեր օրերը: «Կերևնա թե աս Նահապետը քանի մը դար առաջ՝ Շահաբրասին ժամանակները Հայաստան մնացող ազգալիներեն և դած է», — ավելացվում է ծանոթագրութիւն վերջում:

Սակայն ինչն է ստիպել Ալիշանին նման քալի դիմելու, այսինքն աշխարհաբար լեզվով գրված իր անդրանիկ բանաստեղծութիւնը որպես ուրիշի գործ ներկայացնելու:

Հայտնի է, որ XIX դարի առաջին կեսում իր ամբողջ ուժով շարունակում էր բորբոքվել դրաբարի կամ աշխարհաբարի համաժողովրդական լեզու լինելու հարցի շուրջը մղվող բանակռիվը, որը դրականութիւն մեջ հայտնի է «գրապալքար» անունով: Այդ բանակռիվում ակտիվ դեր ունեին Մխիթարյանները, որոնք, աշխարհաբարի կողմնակիցներին հակադրելու համար, գրում, թարգմանում ու գործում էին դրաբարով, իրենց տրպագիր օրգանում ջերմորեն ապացուցում, որ հայ ժողովրդի միակ լեզուն պիտի լինի միայն դրաբարը: «Բազմավեպ»-ը այլևայլ առիթներով բազմիցս հայտարարել է, որ Մխիթարյանները ոչ մի-

այն չեն հրաժարվում այդ լեզվից, այլև համառո-  
 րեն պայքարում են նրա վերականգնման և ժողո-  
 վրդի մեջ արմատավորելու համար: Մխիթարյան  
 ալագ սերնդի ներկայացուցիչներ Ավգերյանը,  
 Թովմաճանը, Ջախջախյանը, Բագրատունին,  
 որոնք կրթվել ու դաստիարակվել էին դրաբարով,  
 հանդիսանում էին նրա ամենազերմ պաշտպանն  
 ու կրքոտ պրոպագանդողը: Միանգամայն հասկա-  
 նալի է, որ այս պայմաններում 27-ամյա Ալի-  
 շանին, որը նոր էր միայն սկսել տպագրվել «Բազ-  
 մավեպ»-ի էջերում, անհնարին կլիներ մի անգա-  
 մից հակադրվել միաբանության ներսում տիրող  
 այդ ոգուն, հակադրվել անառարկելի հեղինակու-  
 թյուն համարվող «հայրերին» և հանդես գալ աշ-  
 խարհարար բանաստեղծություններով: Այս նկատի  
 ունենալով է, որ Ալիշանը դիմել է հիշյալ անմեղ  
 կեղծիքին, որը լիովին արդարացնում է նրան և  
 որի նման այլ դեպքեր քիչ չեն հայանի մեր դրա-  
 կանության մեջ:

«Հայոց աշխարհիկ»-ին համասարազոր տրա-  
 մագրություն է արտահայտում 1848 թվականին  
 «Բազմավեպ»-ում լույս տեսած «Ողբամ զքեզ  
 հայոց աշխարհ» բանաստեղծությունը, որը թեև  
 գրված է նախորդից մոտ մեկ տարի ուշ, բայց  
 ստեղծագործության ձևի, արտահայտած իմաստի  
 տեսակետից ասես նախորդի օրգանական շարու-  
 նակությունն է կազմում: Դա մի սրտակեղևք, ա-  
 դելսարշ մորմոք է արյուն-ավեր դարձած Հայաս-

տանի, նրա կործանված հնությունների ու կղծված  
արժեքների նկատմամբ:

Ողբամ, ողբամ, հազար ողբամ զքեզ Հայաստան,  
Երբեմն բյուր փառաց տեղիք, հիմա դամբան.  
Քո ծիրանիքն մերկացան, քո թագդ առավ,  
Արիությունն հայկական ելավ թռավ:

Ինչպես այդ բնորոշ է «Նահապետ» ստորա-  
գրությունը կրող բանաստեղծություններին, Ալի-  
շանը պատմական մեծ էքսկուրսներ է կատարում,  
ցույց տալիս, որ դեռ շատ հնուց համայն հայու-  
թյունը տանջվել է, նահատակվել, հրի ու սրի ճա-  
րակ դարձել: Դարերի ընթացքում, աշխատասեր  
հայ ժողովրդի հրաշագործ ձեռքերով կառուցված  
գեղատեսիլ քաղաքները, որոնց առջև իրենց գո-  
ռող գլուխներն էին խոնարհում հարեան երկր-  
ի երի քաղաքները, ավերված են ու վերածվել են մոխ-  
րակույտերի: Ժողովրդի ողին արտացոլող և այդ  
ողին սրբությամբ պահպանող գրական հուշարձան-  
ները, թշնամիների կողմից անգթաբար հրկիզվում  
են, դիտության փոխարեն տգիտությունն է թա-  
գավորում: Եվ ծերացած, ահավոր կղեռնից ցնցված  
Նահապետին ոչինչ չի մնում անել, քան ողբալ իր  
սիրելի հայրենիքի ցավալի վիճակը:

Սակայն Ալիշանի այս «ողբ»-ը ամեն ինչ  
տանուլ տված, հայրենի երկրի լավագույն ապա-  
գալի հեռանկարը կորցրած բանաստեղծի լաց ու  
կոծ չէ, ինչպես հաճախ մեկնաբանվել է մեր գրա-  
կանության մեջ: Հայրենիքի դժբախտության հան-  
դեպ ունեցած այդ «ողբ»-ն իր մեջ պարունակում

է բողոքի, ընդվզման, ակտիվ հայրենասիրության տարրեր, որն ամենեին չի կարելի անտեսել: Խորենացին էլ իր ժամանակ ողբում էր Հայաստանն ու նրա պետականության անկումը, բայց կարելի է առանց սխալի մեջ ընկնելու ասել, որ դա սոսկ սուգ ու շիւլան էր: Ինքը՝ Ալիշանն էլ իր բանաստեղծության վերջին մասում ամենայն հստակությամբ այն միտքն է դարձացնում, որ թեև Հայաստանը գտնվում է քայքայման ու կործանման եզրին, որ թեև նա մոռացված է բոլորից, իր նախկին բարեկամներից ու մոտիկներից, բայց կգն ժամանակ, երբ կրկին ոտքի կելնի, կդառնա Տիգրանի, Արտաշեսի ժամանակվա անկախ ու ազատ երկիրը: Կգն ժամանակ, երբ Հայաստանը՝ «Այն աշխարհ որ շատ աշխարհաց մայր էր» նորից կդառնա լույսի, դիտության, գրականության ու կուլտուրայի նշանավոր օջախ, դրքի ու զենքի իր դյուցազունն դավախների օգնությամբ կվերականգնի նախկին փառքն ու հեղինակությունը: Եվ փուլթ չէ, թե այդ երջանիկ օրը կլինի հայրենասեր Նահապետի վերջին օրը: Նա սիրով պատրաստ է «հող մտնել» միայն թե կրկին վերածնվի «նոր Հայաստանը»:

Այս հառաչանքս ըլլան ձեր ձայն, ձեր այս փափագ,  
 Որ հանդարտիկ ելնե հոգյակս, երթա խաղաղ  
 Գերեզմանիս ծաղե արևն հայոց ծիծաղ...  
 Ոհ, թող մեռնի ծեր Նահապետ, մտնու տապան,  
 Այլ թող ելնի՛ ի տապանեն նոր Հայաստան:

Ճիշտ է, Ալիշանը ողջ Հայաստանի ու հայու-  
թյան փրկության գաղափարը կապում է աստծու  
հետ, գտնում, որ հալ ժողովրդի «մեղքերի» հա-  
մար էր, որ աստված պատժեց նրան, կործանեց  
Հայաստանը, նույն աստվածն էլ կփրկի նրան,  
սակայն ամենևին չպետք է մոռանալ, որ նախ՝  
կրոնական դաստիարակութուն ստացած և վանա-  
կան միջավայրում ապրող ու գործող հեղինակից  
այլ բան էլ դժվար էր սպասել, և ապա, հետա-  
դաշում դրած իր բանաստեղծութուններում Ալի-  
շանն աստիճանաբար հրաժարվում է աստծու  
միջոցով փրկվելու սին երազանքներից և հիմնա-  
կանում իր հույսերը կապում ժողովրդի հետ:

1848 թվականին «Բաղմավեպ»-ում լույս է  
տեսնում Նահապետի «Հրազդան» արժեքավոր  
բանաստեղծութունը, որը ստեղծագործական մեծ  
պաթոսի, պատկերավոր ու հստակ լեզվի, գեղե-  
ցիկ մտածված պատկերների ու համեմատութուն-  
ների շնորհիվ ամենայն իրավամբ Ալիշանի  
աշխարհաբար պոեզիայի լավագույն գործերի թվին  
է դասվում: Ամենևին պատահական չէ, որ  
«Հրազդան»-ը Յու. Վեսելովսկու կազմած «Армян-  
ская музыка» ժողովածուում 1907 թվականին ուսու-  
ընթերցողներին ներկայացվելուց հետո (Թարգմ.  
Ումանեց) կրկին անգամ թարգմանության ար-  
ժանացավ 1916 թվականին (Թարգմ. Շերվինսկի)  
և գետեղվեց Վ. Բրյուսովի կազմած «Поэзия  
Армении» ժողովածուում: Հայտնի է, վերջապես,

որ հիշյալ բանաստեղծության մասին մեծ հա իրշ-  
տակությամբ էր խոսում Հովհաննես Թումա-  
նյանը<sup>1</sup>:

«Հրազդան»-ը գրված է հիմնականում այն  
ձևով, ինչ հետագայում և սույն բանաստեղ-  
ծության որոշակի ազդեցության ներքո Պատկա-  
նյանը պետք է գրեր իր նշանավոր «Արաքսի ար-  
տասուքը»: Հեռավոր պանդխտությունից, սիրտը  
լի ջերմ ակնկալներով, վերադարձել է Հրազդանի  
ափերի բնակիչն ու այդ ափերի ջերմ սիրահարը՝  
Բարզենը: Նա հույսերով լի է, հավատացած, որ  
ամեն ինչ կգտնի նախկին գեղատեսիլ ու բարե-  
կարգյալ վիճակում, կտեսնի իր սիրելի Խանատեղին,  
ընկերներին, բարեկամներին: Սակայն ամեն ինչ  
հիմնովիբ փոխվել է: Ամայացել է երկիրը, ոչնչա-  
ցել կանաչ անտառիկը, չկան այլևս հարազատ  
տաղավարիկն ու սիրելի այգին: Գետի գեղածիժադ  
ափերին թագավորում է ավերն ու ամայությունը:  
Եվ վշտացած Բարզենը ողբով դիմում է որբա-  
ցած Հրազդանին.

Վա՛հ, մեր կանաչ անտառիկս ո՞ւր,  
Ո՞ւր տաղավարիկս, ու՞ր մեր նըշխս,  
Հովու՞ն եղան, թե ծովուն կուր.  
Ու՞ր մեր տընակն, ու՞ր մեր այգիս.  
Ա՛յ Հրազդան, ա՛յ ջուրք հայրենիք,  
Ա՛յ ափունք, է՞ր կու լայք լըռիկ:

<sup>1</sup> Ա. Տերտերյան, Հայ կլասիկներ, Երևան, 1944, էջ 45:

Բայց Հրազդանը ոչնչով չի կարողանում գոհացում տալ հայրենակարոտ Բարգենի վշտագին հարցումներին: Նա «լռիկ լալով» իր ասիերին տեղի ունեցած անթիվ աղետների ու կոտորածների վրա, համակ տխրություն ու վիշտ դարձած, մռայլ տանում է իր ջրերը՝ անպատասխան թողնելով պանդխտին: Հուսահատված Բարգենը ցավագին մորմոքում է.

Ա՛հ, անցուդնաց կղել ամեն,  
Ա՛հ, անցուդնաց է Հայաստան,  
Զիս անմեկիկ թողած աստեն՝  
Հետ անցնիս դնաց դուն այլ Հրազդան...

Անցի՛ր զընա, ջրիկդ հայրենի,  
Արտսունք հերիք են Բարգենի:

«Հրազդան»-ի մեջ արդեն որոշակիորեն դրսև-վորվեց այն շատ հետաքրքրական առանձնահատկությունը, որն սկսեց նկատվել դեռևս քառասունական թվականների Ալիշանի պոեզիայում և հետագայում իր զարգացումը գտավ «Հայրունի» հատորում դետեղված գործերում: Այդ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ հեղինակը որպես հայոց թշնամի հիմնականում ճանաչում է պարսիկներին: Բանաստեղծության շորրորդ տնում կարդում ենք.

...Իմ ընկերներն ու՞ր են, Հրազդան  
Մի՞թե պարսիկն կդան դերուկ,  
Մի՞թե ամենքն ի հո՞ղ մըտան.

Ա՛յ Հրազդան, ա՛յ ջուրք հայրենիք,  
Ա՛յ ափունք, է՞ր կու լայք լըռիկ:

Սակայն հարց է ծագում, այս բանաստեղծության մեջ Ալիշանն ինչո՞ւ է իր խոսքի սուր ծայրն ուղղում դեպի պարսիկները: Չէ՞ որ, ըստ էության, թուրքերն էին թշնամական հարաբերությունների մեջ հայերի հետ, իսկ պարսիկները, 1828 թվականի Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը չէին դրժել ամբողջ XIX դարի ընթացքում և չդրժեցին այն մինչև մեր օրերը: Պատասխանը պարզ կլինի, եթե նկատի ունենանք, որ նախ՝ Մխիթարյան միաբանությունը թուրքական օրիենտացիա ուներ և, հետևաբար, Ալիշանը չէր կարող իր ստեղծագործություններում անդրադառնալ թուրքական բռնակալությանը կամ, առավել ևս, պայքարի կոչեր նրա դեմ: Ալիշանը իր հետագա ամբողջ ստեղծագործության ընթացքում կոչ է անում կովի ևլնել պարսիկների դեմ, իր հայրենիքի դժբախտության պատճառը համարում է առաջին հերթին պարսիկներին, ստեղծագործության համար նյութ վերցնում հայոց պատմության այն շրջանից, երբ հայերը մարտնչել են պարսիկների դեմ:

Սրան միանում է նաև մի ուրիշ, ոչ պակաս կարևոր հանդամանք: Մեր գրականության դասական տրադիցիան հայոց պատմության բազմաթիվ տվյալների հիման վրա սովորեցնում էր, որ հայերի թշնամիները բոլոր ժամանակներում գերա-

դանցապես եղել են պարսիկները: Սկսած վարդա-  
նանց հերոսամարտը ներբողող Եղիշեից մինչև  
XVIII դարի կեսերը, ավել կամ պակաս ուժգնու-  
թյամբ այս տրադիցիան տիրապետող էր հայ գե-  
ղարվեստական գրականության անդաստանում:  
Այս տրադիցիան ժառանգել էին հայ գրողներից  
շատերը, մինչև Ալիշանը եղած Մխիթարյան հեղի-  
նակները, հարկավ՛ նաև Ալիշանը: Ահա թե ինչու  
նրա պոեզիայում «պարսիկ» հասկացողությունն  
ունի շատ ավելի լայն իմաստ և համազոր է  
«թշնամի» հասկացողությանը:

1848 թվականին սկսված վեհնետիկյան հերո-  
սամարտերը, ամբողջ աշխարհին հատակությամբ  
ցույց տվեցին, թե ինչպիսի դյուցազնական պայ-  
քարի է ընդունակ այն ժողովուրդը, որն իրոք  
կամենում է ազատ լինել բոլոր տիպի ճնշողներից:  
Այդ դեպքերն սկսվեցին մարտի 19-ից, երբ ոտքի  
ելած ժողովուրդը բանալից ազատեց նշանավոր  
ոևոլյուցիոներ Դանիել Մանինին, որն անհապաղ  
հավաքելով իր կուսակիցներին, ստեղծեց ժամա-  
նակավոր կառավարություն և անցավ ապստամ-  
բության գլուխը, սակայն պայքարն առանձնապես  
բորբոքվեց օգոստոս ամսվանից սկսած, երբ  
Ավստրիական կառավարության կանոնավոր զոր-  
քերը մարտական գործողությունների սկսեցին  
ապստամբների դեմ:

Այդ պայքարի ամբողջ 17 ամիսների ընթաց-  
քում անձամբ գտնվելով ապստամբած վեհնետի-

կում և տեսնելով իր իրավունքների պաշտպանութ-  
յան համար ոտքի ելած ժողովրդի պայքարը,  
Ալիշանը դադարախախտ օրոշ էվոլյուցիա է  
ապրում: Այս մասին է խոսում այն հանգամանքը,  
որ նա իր հայրենասիրական-մարտական բանա-  
ստեղծութունների շարքը գրել է այդ թվական-  
ներին՝ իտալական ազգային-ազատագրական շար-  
ժումների ժամանակ և այդ շարժումների օրոշակի  
ազդեցության ներքո: Վառոդի ծխի մեջ պարուր-  
ված Վենետիկում մարտական շունչ էին ստանում  
Նահապետի երգերը:

Իսկ սրա համար այլևս չէր կարելի նախկին  
ձևով գրել, չէր կարելի սգալ ու լալ, այլ անհրա-  
ժեշտ էր պահանջել, որոտալ և Ալիշանը կրկին  
դիմում է գրաբարին: Հետաքրքիր է մի հանգա-  
մանք. իրոխտ, մարտնչող, պայքարի կոչող բա-  
նաստեղծութուններ գրելիս Ալիշանը դիմում էր  
գրաբարին, իսկ երբ անհրաժեշտ էր խոսել մեղ-  
մորեն ու հանդարտիկ՝ անդրադառնում էր աշխար-  
հաբարին: Մեկը մյուսի հետևից հանդես են գալիս  
գրաբարով գրված մրրկաշունչ, մարտակոչային  
բնույթի բանաստեղծութուններ, որոնք կազմում  
են հայ գրականության՝ այդ շրջանի լավագույն  
դործերը: Հիշյալ բանաստեղծութունների շարքը  
սկսվում է «Բազմավեպ»-ի 1848 թվականի ապրիլ  
ամսվա համարում տպագրված «Սեպուհն Վասակ»  
բանաստեղծությամբ, որը պատկերում է հայոց  
զորավար Վասակի մղած հերոսամարտը պարսիկ-

ների դեմ, նրա հաղթանակը և քաջերի հերոսական  
մահը հայրենիքի համար: Հենց սկզբից Ալիշանը  
խոսում է որոտի լեզվով.

Շունդն անեղ հնչէ վրիժապահանջ յԱրեաց դրանէն,  
կորանաց կանգնումն առնել բիւրովք զօրօք հրոսօք,  
Ի մարտ մահահոտ մրբրկեալ Միհրան դէն յասպադէն՝  
Վերացեալ վարդի հետեակօք, ձիովք, փըղօք.

Հասա՛ մանկտի դբաջս հայոց դարթուցէք,  
Յարիւն ժանտից ըզսուսերս մերկացէք:

Հայոց դյուցազուն քաջերը խիղախարար պատ-  
րաստվում են կռվի, նրանց՝ օդնության են շտա-  
պում «վիրք, հոնք և աղուանք», որոնք հայկական  
բանակի հետ մեկտեղ, Վասակի հմուտ սուաջնորդու-  
թյամբ, նետվում են կռիվ, ջախջախելու թշնա-  
մուն: Սկսվում է արյունոտ, կատաղի մարտը:  
Սկզբում պարսիկները փորձում են դիմադրել, բայց  
հայոց քաջերը, դաշնակցած իրենց հավատարիմ  
հարեանների հետ, հերոսության հրաշքներ են գոր-  
ծում: Թշնամու սեպուհնդ զորքը շուտով սկսում  
է տեղի տալ, իսկ դրա փոխարեն էլ ավելի դյու-  
ցազնաբար են կռվում հայերը: Մարտն ավարտվում  
է պարսիկների պարտությամբ ու նրանց խուճա-  
պալին, խայտառակ փախուստով: Այս բանը մեծ  
ցնծություն է առաջացնում Վասակի հոգում: Բայց  
միևնույն է, փախուստը չի կարող փրկել նրանց

լիակատար ջախջախումից: Իմեկով թշնամիներին, նա բացականչում է.

Ի դու՛ր ձեզ, ի դու՛ր. ընդ ճանապարհդ այդ շի՛ք փախուսա  
Համառօտեցան ձեզ արեւունքըդ թըխաթոյր,

Սակայն փառք ձեզ այս՝ բազկաւ քաջի դնալ ի կորուստ,  
Հրաճօճ նիդակիս՝ արիւնն բերան տալ ըզհամբոյր.

Հայս՛ց մանկաի, ընդ դիակունս ընթացէք,

Յարիւն ժանտից ըզսուսերս կրկնեցէք:

Փառավոր հաղթանակ տարած Վասակը դիմում է հայոց զորքերին մի կոչով, որն անշուշտ արտահայտում է նաև հեղինակի սկստիվ վերաբերմունքը, այն է՝ միշտ պատրաստ լինել հայրենիքի թշնամիներին դեմ պայքարելու, անհրաժեշտութեան դեպքում նրանց զենքով հակահարված տալու:

Հերոսական նման բնույթի գործ է նաև Շաջակորոյն Մուշեղի ճակատամարտի Չիրաւայք բանաստեղծութիւնը, ուր հեղինակն իրեն հատուկ խանդավառութեամբ պատկերել է Չիրավի ճակատամարտում Մուշեղ Մամիկոնյանի ու նրա բանակի պայքարը պարսկական արյունոտուշտ հրոսակների դեմ և նրա տարած հաղթանակը: Հեղինակն այստեղ առաջ է քաշել հայրենիքի դավաճանի հետ ունենալիք վերաբերմունքի հարցը: Հայոց քաջերի դուրսն անցած, Մուշեղը կատաղի մարտերից հետո ջարդ ու փշուր է անում թշնամուն և կրնիակոխ հետապնդում ադիանների թագավոր Ուռնայրին, որը սարսափահար, մահն աչ-

քի առաջ, փախուսաի է դիմում: Նույն ձևով էլ  
փորձում է ճողոպրել ու ազատվել դավաճան  
Մերուժան Արծրունին, բայց՝

Կա՛ց Արծրունիդ դու, կա՛ց ամբարիշտ  
Հայոց թագին հետախընդիր  
Յարժան վարձուցդ հի՞մ խուսափես միշտ.  
Ահա եհաս քեզ թագադիր  
Սըմբատ ասպետ դայս քեզ ի տրխոուր,  
Կունտ գագաթանդ ամէ շամփուր  
Արբանեակ հըրոյ, պըսակեաց հըրով  
Ն կ'ըթ բաղմեաց ի գահ յԱրհմանի ժողով.

Ա՛յս թագ, ա՛յս գահ մատնըչաց,  
Որք դրժեն հայ հայրենեաց:

Այս է Ալիշանի խորին համոզմունքը, որ նա  
չփոխեց մինչև վերջ. հայրենիքի դավաճանը իր  
արածի համար պետք է միայն կյանքով հատուցի:  
Վերևում վերլուծված ստեղծագործություն-  
ների թեման, ինչպես տեսանք, վերաբերում է  
հայ ժողովրդի պատմության հին շրջանին: Գերա-  
դանցապես պատմական է նաև Ալիշանի՝ այս  
շրջանում ստեղծած մյուս բոլոր գործերի թեմատի-  
կան: Սակայն պատմական անցյալին նվիրված նրա  
բանաստեղծությունները որոշակիորեն տարբեր-  
վում էին իր նախորդների հիշյալ բնույթի ստեղ-  
ծագործություններից: Վերջիններս Հայաստանի  
տվյալ ժամանակաշրջանի վիճակից բխող, նրա  
առօրյա պահանջներից ելնող գործեր չէին: Դրանք  
գրված էին ժամանակից ու տարածությունից

դուրս, կտրված ու հեռու հայությունից, հետևա-  
բար և անհասկանալի էին ժողովրդին: Այդ բանա-  
ստեղծությունները հողևոր սնունդ, «սրտի խոսք»  
չդարձան հայ ժողովրդի համար և կթե շլինեին  
էլ՝ հայ գրականությունն ու հայությունը քիչ բան  
կկորցնեին:

Այլ ևն Ալիշանի բանաստեղծությունները,  
գեղարվեստորեն վերարտադրելով պատմական  
իրականությունը, հեղինակը անդրադառնում էր  
ժամանակի հուզող խնդիրներին, առաջադրում  
կոնկրետ, որոշակի պահանջներ: Այս է հիմնական  
տարբերությունը Ալիշանի ու նրա նախորդների  
միջև, որն այնքան բարձրացնում է Ալիշանին:  
Չմոռանաք, որ XIX դարի ընթացքում կուլիասում  
ծալր առած պատերազմական գործողությունները,  
առևտրական դորքերի հաղթական առաջընթացը հաս-  
տատ հույսեր էին ներշնչում հայությանը, որ ար-  
դեն մոտենում է թուրքական ու պարսկական  
բռնապետությունից ազատագրվելու բաղձալի  
ժամը: Ահա թե ինչու Ալիշանի հայրենասիրական  
բանաստեղծություններն այնքան համահնչուն ու  
համընթաց էին ժամանակի հետ: Նրանք գետեղ-  
վում էին դասագրքերում ու դանազան ժողովա-  
ծուներում, արժանանում արտաստալությունների ու  
թարգմանությունների:

Բացի այս, պատմական թեմատիկային ան-  
դրադառնալիս մինչև Ալիշանը եղած հեղինակների  
մոտ նկատվում է մի թերություն ևս. կթե նախորդ-

ների ստեղծագործութիւնների հերոսները բացառապէս արքաներ, նախարարներ և իշխաններ են, ապա Ալիշանի երկրորդ շրջանի ստեղծագործութիւններում որպէս կռիւղ ուժ հանդէս են դալիս հիմնականում զինվորները, «արի մանկունք», որոնց գիմում և խրախույս է կարգում բանաստեղծը՝ շանտեսելով, իհարկե, զորավարներին: Մի բան, որ, Ալիշանից անկախ, այնքան վարպետորեն արել է Խ. Արուստանն իր հռչակավոր «Վերք Հայաստանի» պատմաւեպում՝ պատկերելով ժողովրդին և նրա ծոցից ելած դյուցազնական առաջնորդ Աղասուն:

1848 և 1849 թվականներին պատմական թեմատիկայով գրված Ալիշանի բազմաթիւ հայրենասիրական բանաստեղծութիւններից հիշենք նաև հետևյալները. «Արտաշես Բ տօմարադիր», «Հառաչումն Գազկալ վերջնոյ», «Բանք Վահրամալ Պահլաւունոյ», «Ողբք Հեթմոյ ի վերալ որդւոցն» և այլն: Նշված և բազմաթիւ ուրիշ գործերում Ալիշանը մերթ հանդէս է դալիս որպէս կրքոտ ու ջերմ հայրենասեր՝ ազատագրական պայքարի ըմբոստ կոչ անելով, մերթ անկեղծ ցավում է իր քարուքանդ եղած հայրենիքի համար և Գազիկ թագավորի բերանով պահանջում ոտքի ելնել հայրենի երկրի հինավուրց փառքը պաշտպանելու համար, մերթ հուլիների ձեռքը դերի ընկած Վահրամ Պահլավունու բերանով ցավում իր հայրենի-

քի անդորուծիան վրա և անեծք կարգում ստոր  
դավաճաններին:

1848 թվականի վերջերին և 1849 թվականի  
սկզբներին Ալիշանը գրում է իր «Վերջին կրգ  
վիրավոր բամբուռահարին» բանաստեղծութունը,  
ուր պատկերվում են հայրենիքի ազատութիան  
համար մղած պայքարում մահացու վիրավորված  
զինվորի կյանքի վերջին վայրկյանները: Աներկյուղ  
հայրենասերների հետ միասին մարտադաշտ է  
եկել նաև բամբուռահար Փառենը, թշնամու հետ  
գուպարելու անսասան վճռականութիամբ լի, մար-  
տընչել է խիղախարար, սակայն թշնամին խոցել  
է նրան.

Հետ սևահոն աղեղնավոր կըտըրճաց՝  
Որ անգուման արունեն զգաշտըս ծաղկած,  
Ես, որ անփորձ, անգետ նետի և սըրո,  
Լուկ շարժելի զսիրտըս կըռվի և սիրո,

Եվ ևս Փառեն բամբուռահար,  
Հայոց քաջացս հավասար  
Ընկնիմ ծաղիկ հողմավար:

Սակայն բանաստեղծութիան ինչպես այս,  
այնպես էլ հաջորդ տներում արտահայտված մոր-  
մոքը, հրաժեշտի խոսքերը ամենեին չեն նշանա-  
կում, որ Փառենը գեթ փոքր ինչ զղջում է տեղի  
ունեցածի համար, զղջում, որ ինքը մասնակցել  
է կռվին: Ընդհակառակը, Փառենի խոսքերը վկա-  
յում են այն մասին, որ գիտակցաբար կռիվ մտած

զինվորը հայրենիքի փրկության համար որոշել է կանգ չառնել ոչնչի առաջ և, անհրաժեշտության դեպքում, իր կյանքը զոհել հայրենիքին: Ավելին, կիսաշունչ վիճակում նա պահանջում է բերել իր բամբիւրը՝ վերջին անգամ երգելու համար:

Ար՛ ե՛կ հիմիկ կարմրուկ բամբուիկ իմ սիրուն,  
Առջին, վերջին խաղ՝ իմ խամբած մատներուն.  
Դեռ երգ մ՛ ունիմ, դեռ շունչ մ՛ ունիմ, ունիմ սեր  
Չամենն հավսար Հայ հայրենյացս եմ ավեր.

Բամբուի՛կ, Փառեն կու մեռնի,  
Ապրի՛ն սեր ու երգ հայրենի,  
Բամբուի՛կ, մնա՛մք կենդանի:

Այսպես ուրեմն, մեռնել սիրելի հայրենիքի համար՝ առանց վարանելու ու երկընտրանքի, և մահը ծաղրելու համար՝ մեռնել երգը շուրթերին: Հայրենասիրական միտնդամայն առողջ մտայնություն, որը այս բանաստեղծության մեջ դրսևորվում է առավել ուժով:

«Վերջին երգ վիրավոր բամբուահարին»-ը մի անհրաժեշտ աստիճան էր, որին պետք է հաջորդեր «Մասիսու սարերն»:

«Բաղմավեպ»-ի 1849 թվականի մարտի համարում լույս է տեսնում Ալիշանի «Մասիսու սարերն» խորագրով լավագույն բանաստեղծությունը, որը նահապետ ստորագրությունն ունեցող մյուս գործերի նման, գրված է երկախոսության ձևով: Ստեղծագործության այս ձևը, որի մեկ-երկու

օրինակներին հանդիպում ենք նախորդների մոտ,  
իր առավել զարգացմանն է հասնում Ալիշանի  
այս շրջանի բանաստեղծություններում:

Վիճում են Մեծ և Փոքր Մասիսները, ըստ  
որում նրանցից յուրաքանչյուրին հեղինակն օժ-  
տել է միանգամայն ինքնուրույն քնավորությամբ:  
Մեծ Մասիսը հանդուգն է, համարձակ, նրա խոս-  
քերում հպարտության և ինքնավստահության ու-  
ժեղ շեշտ կա: Փոքր Մասիսը, ընդհակառակը, հեղ-  
նող է, կասկածոտ, քննադատարար է վերաբերվում  
տեղի ունեցող բոլոր դեպքերին, քննադատում է  
անգամ իր «ավագ եղբայր» Մեծ Մասիսի ասած-  
ները: Նա, այս կապակցությամբ վիճելով Մեծ Մա-  
սիսի հետ, հոռետեսորեն ասում է:

Ձի հիմիկ փոխվել է հայոց երկիր,  
թէ փառք, թէ պարծանք անցել են, դնացել  
Քո բարձր գլխեդ ի վայր են սահել:

Մեծ Մասիսը, իր արժանապատվությունը քաջ  
գիտակցողի նման նրան տալիս է խրոխտ ու ան-  
երկյուղ պատասխան. թեև հայոց գլխին եկած  
այլևայլ դժբախտությունները նրան ծանր լնաս-  
ներ են հասցրել, բայց դրանք բոլորը կանցնեն,  
քանի որ կան հայությունը. ինքը, հայոց հինավուրց  
սարն է, որ ժամանակակից է նույն, Ադամին, Հայ-  
կին. մի սար, որը հրաբուխ է հասունացնում իր  
մեջ, ահեղ ու զարհուրելի հրաբուխ, որը պիտի  
ժայթքի, հուր ու կրակ տարածի ամենուրեք, այրի

ու մտխրացնի ամեն ինչ: Առաջարկելով մոտենալ  
իրեն, իր ներսը նայելու համար, Մեծ Մասիսն  
ասում է.

Գիտես թե մարած է զինչ հին կանթեղ  
Բայց թե տամ քըչիկ մի քուքուրդի դեղ  
Յանկըսկած դաշտերդ ամեն ի ման գա  
Դու այլ հետ լերանց դողաս զինչ տըղա...  
Թե ուզենամ նոր կանգնեմ ես սարեր  
ՅԱրագած դեսպան զըրկեմ բարկ քարեր,  
Բոցեղեն գետ մ' ալ հետ ածեմ վազան  
Վա՛յ, որ դեմ կանգնի՝ լափե՛մ զինչ գազան.

Այսպես մոլեգնած է Մեծ Մասիսը, և Նահապետի վերաբերմունքը որոշակիորեն «զինչ գազան» լափող սարի կողմն է, որն հանդիսանում է հեղինակի տրամադրությունների արտահայտիչը: Այս իմաստով ամբողջ բանաստեղծության մեջ իսպառ բացակայում է թախծոտության այն ուժեղ շեշտը, որ այնպես զգալիորեն առկա էր Նահապետի նախորդ գործերում: Բանաստեղծությունն ավարտվում է բնորոշ մի վերջաբանով: Երկու սարերի խոսակցությունից հետո հանդես է գալիս ինքը՝ Նահապետը, որը ոչ միայն չի փորձում որևէ կերպ մեղմացնել Մեծ Մասիսի մարտաշունչ տրամադրությունը, զսպել նրան, այլ ուղղակի կոչ է անում՝ ավելի մոլեգնել, ավելի մըրրկել, ավելի շատ «ծըխիկ ծիրանի» շնչել: Այլ կերպ ասած, Մեծ Մասիսի մեջ, սիմվոլացնելով հայ ժողովրդին

Ալիշանը կոչ է անում չհանդուրժել տիրողի լուծը,  
չհուսահատվել անհաջողություններից, այլ ոտքի  
ելնել ազատությունը նվաճելու, հայրենի երկիրը  
փրկելու համար.

Շարժի՛ր, հա շարժիր Ավագըդ Մասիս,  
Արձան պարձանաց հայոց աշխարհիս  
Շընչե՛, հա շընչե ծըխիկ ծիրանի,  
Որ քո մանկըտյաց հուսո նշան ըլնի.  
Ահա շարժեցավ Ավագըն Մասիս  
Արձան պարձանաց հայոց աշխարհիս  
Ահա շարժեցան դաշտք Արարատա  
Դո՛ւք այլ շարժեցեք, մանկըտիք Հայկա:

Առանձնապես ուժգին է բանաստեղծության  
վերջին քառյակը, ուր հեղինակը «Հայ մանկտի»-նե-  
րին կովի հորդոր կարդալուց հետո, հայրենիքի  
ազատության սիրով բորբոքված և թշնամուն  
ջախջախելու անխախտ վճռականությամբ լի, ինքն  
է նետվում պայքարի, կոչ անելով հետևել իրեն,  
դեպի Մասիս գնալու համար.

Շարժի՛ր, ահ շարժիր դուն այլ նահապետ,  
Մասեաց սարերուն շընչիկն առ մեկ հետ...  
Ահա շարժեցավ ծեր նահապետն այլ.  
Ո՞վ դեպի Մասիս յուր հետ կառնու քայլ:

«Շարժվելու» այս անսքող կոչով էլ հեղինակն  
ավարտում է իր բանաստեղծությունը:

«Մասիսու սարերն» բանաստեղծությամբ զեն-  
քով հայրենիքը փրկելու գաղափարը մուտք է  
գործում Ալիշանի՝ նահապետ ստորագրությունը

կրող գործերի մեջ, նրա աշխարհիկ պոեզիայում.  
հենց դա էլ բանաստեղծություններին խրոխտ,  
մարտական բնույթ է տալիս: Այս հանգամանքն  
առանձնապես պետք է ընդգծել, որովհետև մեր  
քննադատական գրականության մեջ հաճախ է նըշ-  
վել, որ «Նահապետի երգերում Ալիշանի արտահայ-  
տածը սոսկ լավիան հայրենասիրություն է» (Լևո),  
որ «Ողբն ու արցունքն կկազմի Նահապետի հայ-  
րենասիրական տավղի ամենեն ուժեղ լարը» («Մա-  
սիս», 1890, № 39-42) և այլն: Մինչդեռ, ինչպես  
ակնհայտ է, Վենետիկի սեուլուցիայի անմիջա-  
կան ազդեցության ներքո Ալիշանի աշխարհաբար  
գործերում ևս ամենայն ուժով հանդես է գալիս  
այն մարտաշունչ տրամադրությունը, որ առկա  
էր նրա դրարար բանաստեղծություններում:

Այդպիսի մի գործ է «Ի Հայկն և ի բաստ Հայ-  
կազանց»-ը, որը մի տեսակ նախապատրաստու-  
թյուն է «Բամ. փորձուտան»-ի ստեղծման համար և  
հանդիսանում է Ալիշանի պոեզիայի ուժեղ գոր-  
ծերից մեկը:

...Հայկը կռվի է կոչում յուրայիններին:  
Բելի սև հրոսակները արշավում են հայոց եր-  
կիրը ստրկացնելու, և թեև նրանք բազմաթիվ  
են, բայց Հայկն աներեր՝ յուրայիններին տանում է  
նրանց դեմ կռվի, քաջ գիտենալով, որ իր երկրի  
ազատության համար մղած պայքարում իրենք  
պիտի հաղթեն:

Բոմբիւնք թմբկաց տոփեն լերանց ի լերինս,  
Հայկայ հրաւէր վառէ զորդիս՝ դիւցազինս,  
Ի հարաւոյ հեղեղեաց Բել բըռնաւոր,  
Արի՛ք բնդդէմ. հարցին դարձցին կորակոր,

Խայտակն Հայկայ դհետ,  
Որդիք զուղահետ՝  
Հասին արծուիք երազունք.  
Շկահեն յաղեղանց  
Խուճբք արի արանց  
Թոթափին ցուրտ դիակունք.

Ալիշանը, գեղարվեստորեն վերախտադրելով  
Հայկի ու Բելի՝ Խորհնացու նկարագրած կռիվը,  
աստիճանաբար լայնացնում է իր ընդգրկման  
սահմանները և իրեն հատուկ թափով նկարագրում  
ընդհանրապես հայերի պայքարը հանուն ազատու-  
թյան, հիշատակում Հայկից շատ հետո ապրած,  
բայց Հայաստանի անկախության համար պայ-  
քարած գործիչներին: Բանաստեղծի խոր համո-  
զումով հայերը պիտի հաղթեն ու չեն կարող  
չհաղթել, որովհետև նրանց ոգևշնչում են հայ  
ժողովրդի ազատագրական պայքարի հերոսները:  
Եվ ոգևորված Ալիշանը բացականչում է.

Օ՛ն, առաքինիք,  
Բորբոքեալ հոգիք  
Կեցցէ՛ աշխարհ մեր ի մեզ:

Հայերը փալլուն հաղթանակ են տանում,  
ջարդ ու փշուր անում թշնամու՝ թվով գերազանց  
զորքը, դարձնում են Շնոցա ի փախուստ: Ան-

սահման է հաղթողների ոգևորութիւնը, որ կարողացան մինչև վերջ պաշտպանել հայրենիքի ազատութիւնը, անսահման է իր՝ Ալիշանի հիացմունքը, և նա ավարտում է բանաստեղծութիւնը՝ գոչելով.

Կեցցու՛ք. կեցցե՛ն հայկազունք:

Հաղթութիւնը տարել ևն «Հայկազունք», և ուշագրավ է, որ այստեղ արդեն բացակայում է կրօնական ոգին: Եթե մինչև այդ Ալիշանը, սովորաբար, բանաստեղծութիւնների վերջում մաղթանքի մի քանի խոսք էր ասում աստծուն, ապա այստեղ այդ բանը չենք տեսնում:

1849 թվականին, երբ Վենետիկում ռևոլյուցիոն-ազատագրական պայքարը իր գագաթնակետին էր հասել, Ալիշանը գրում է իր գրական գոհարներից մեկը՝ «Երգ ու գնացք ղօրացն հայոց րնդ Վահանայ Մամիկոնենու ի Շաւարշական դաշտին վրէժք, (Օն անդր յառաջ)» բանաստեղծութիւնը, որն ավելի հայտնի է իր առաջին քառյակի առաջին երկու բառերով: Դա նշանավոր «Բամ. փորոտանն» է, որը տարիներ շարունակ եղել է երգարանների անբաժանելի զարդը, և մինչև այսօր էլ կատարվում է զանազան երգիչների ու երաժշտականքների կողմից:

Բամ. փորոտան, բարձուստ բոմբիւք յԱյրարատեան  
դաշտն ի վայր.

Արի արանց արիւնք յեռանդն առատանան ի

հրազայր.

Հրաւէր հայրենեաց հոշակի՝ նդ հանուր  
Հողիք Հայկազանց բորբոքին ի հուր.

Դեպի մարտ, իր քաջարի զորքերին դեպի  
մարտ է առաջնորդում Վահանը, հետեւյալ հորդորը  
կարդալով նրանց.

«Որք երկնաւորի պսակին եք անձկոտ  
Ու որ երկրաւորիս փառաց երկնահորդ,  
Հաս' օ՛ն, արի արանց մանկունք՝  
Հայրենավրէժքըդ Հայկազունք,  
Հաս' օ՛ն, ի դէն դունդ առ գունդ,  
Յեռեալ ի պար թունդ ի թունդ՝  
Ի դէ՛ն ի վրէ՛ժ, օ՛ն անդր յառաջ  
Ի դէն ի վրէժ, մի ձախ, մի յաջ

Օ՛ն անդր յառաջ  
Մի ձախ մի յաջ  
Օ՛ն անդր յառաջ  
Յառա՛ջ, յառա՛ջ  
Հաս' օ՛ն, յառաջ:

Բանաստեղծութիւնը իր բովանդակութեամբ  
նման է նախորդներին՝ հայերի կռիւլը Վահան Մա-  
միկոնյանի գլխավորութեամբ, պարսկական հորդա-  
ների դեմ ու նրանց փալլուն հաղթութիւնը: Ամ-  
բողջ բանաստեղծութիւնը գրված է մրրկաշունչ,  
մարտական ոգով, և հատկապէս ընտրված բառերը  
աչնպիսի սպառնական բնույթ ևն տալիս բանա-  
ստեղծութեանը, որը բացառիկ է Ալիշանի ամբողջ  
ստեղծագործութեան մէջ: Նա ոչ մի տեղ այդպէս  
ուղղակի, համարձակ ու աներկչուղ չի դիմել հայ

հանրութեանը՝ ոտքի ելնելու, բռնապետութեան լուծը թոթափելու կոչով: Պատահական չէ, որ այս բանաստեղծութիւնը 1850 թվականին Վատիկանում տպագրուեց հետո մինչև օրս մոտ 40 վերահրատարակութիւն է ունեցել: Մարտաշունչ տրամադրութեամբ է հաղեցած ամբողջ բանաստեղծութիւնը.

Ի գուպարել մարտաշարդար դարշապարաց Արամայ՝  
Գոռան կորդրիք, մանչեն Մասիք, հորնչեն սահանք,  
Երասիայ.

Ի դոռհ, ի դոռհ տալ բիւրուցն ոտնատրոփ  
Տատանին դաշտակք, յառնէ շունդն ապշոսլ.  
Կռուփ առ կռուփ կոփեն կմբայք, տէգ առ տէգ,  
Դորդ առնուն տարերք կորովեացն ի վէգ  
Հասլ օ՛ն...

Կատաղի ճակատամարտը շարունակվում է. երկուստեք կռվում են խիզախարար, երկուստեք դեպի են տապալվում մահացու խոցված մարտիկները: Մամիկոնյանների ռազմադրոշը երևում է կռվի դաշտի զանազան մասերում, կռվի ամենավտանգավոր տեղերում, և ամենուրեք հալոց դլուցադուններին ոգևորում է նորանոր հերոսական սխրանքների համար: Ճակատամարտի ամենալարված մոմենտն սկսում է թուլանալ, հաղթութեան արևը աստիճանարար թեքվում է հալոց դորաբանակների կողմը և հալերն սկսում են նեղել պարսիկներին: Հալերը, ներշնչված դրանից, կռվում են դլուցադունների նման, կռվում են՝ հե-

բոսականութեամբ, իրենց նախահայր Հայկից և ա-  
չմնալով: Մեծ է նահապետի ոգևորութեանը. տես-  
նելով պարտվող թշնամուն, նա կրկին հնչեցնում  
է իր մրրկացայտ քնարը.

Արի՛ք ի կռիւ քաջահորովքդ՝ ընդ կորահոր  
հրոսն Արեաց  
Հա՛յա համհարդք մեր բխրայաղթք, ձեզ նոր  
հանդէսք են փառաց.

Թո՛րք ի սաղմ, ի խաղմ, առէք զէն ևւ զարդ  
երեսնիւք յըսնիւք հարուլ բեւրս հազարս,  
Ի սուր ի սուսեր կարշնեղ յաղեղունս  
Ըզսեաւ Սասանեանց ջարդել կառափունս  
Հապ՛ օ՛ն...

...Եվ շատ պիտի տանջվեն հայերը պարսիկ-  
ների անգութ կրնկի տակ: Շատ պիտի սգան, կա-  
նաչք ալրի մնան, մանուկները՝ որք, լացն ան-  
պակաս լինի Հայաստանից: Դեռ երկամբ պիտի  
քանդվեն ծաղկած շեներն ու գեղատեսիլ ավանները,  
մոխիրների տակ մնա բովանդակ Հայաստանը:  
Կարծում եք հայերը կավիլ չգիտնեն: Կարծում եք  
ներանք չեն կարող անվեհեր կերպով երթալ «աս-  
պարեզ քաջաց» և ցույց տալ, որ իրենք նշանա-  
վոր նախահայրերի արժանավոր որդիներն են, «արի  
արանց են մանկունք»: Եվ հայրենիքի համար  
կենաց ու մահվան կովի ելած հայերն սկսում են  
հաղթել թշնամուն ու ապա ստիպում ներան փա-  
խուստի դիմել: Հիացած է Ալիշանը. անսահման  
անպարսիակ երջանկութեամբ նա երգում է հակա-

ռակորդի խայտառակ, սարսափելի պարտութիւնը,  
ուրախանում է՝ մարտադաշտում թափված նրանց  
դիակները տեսնելով: Բայց Հայաստանն իր հո-  
դում պարսիկ չի կարող հանդուրժել, լինեն նրանք  
կենդանի, թե մեռած, որովհետև այդ կնշանակելու  
անարդիւ ալն դյուցազուն հալ քաջերի սրբազան  
նշխարները, որոնք իրենց կյանքը նվիրել էին Հա-  
յաստանը թշնամուց պաշտպանելու ազնիւ գործին:

Օ՛ն անդր, ի բա՛ց հայկեան հողոյ հըսկայազանց  
եւ սըրբոց

Ի բա՛ց ջոխր շըւառական մոխրապաշտիցըն  
պըղծոց.

Դաշտք մեր մերժեսցեն դոսկրոտին անգամ

Արիւնք վըկայից դճապաղիսն անժամ.

Ոտն ընդ դիս տոռնեալ դարձցին ի փախուստ,

Մատնակուրծք ընդ հայս հայեսցին հեռուստ.

Հապ՛ օ՛ն...

Այս ոգով էլ շարունակվում է բանաստեղծու-  
թիւնը մինչև վերջ և ավարտվում մի շատ  
գեղեցիկ պատկերով: Մամիկոնյանների մարտա-  
դրոշը հպարտ ու վեհորեն բարձրացված է արյու-  
նոտ ռազմադաշտի վրա, որպես համայն հայու-  
թյան ազատութիւն սիմվոլ:

Այս և նախորդ գործերի ուշագիւր քննութիւնը  
մեզ համար բացահայտում է Ալիշանի հայրենա-  
սիրական պոեզիայի մի այլ դրական առանձնա-  
հատկութիւնը: Հայրենասիրական գործերով

XIX դարում հանդես եկան ուրիշ հայ բանաստեղծ-  
ներ ևս, որոնք, սակայն, կոչ անելով պայքարել  
թշնամու դեմ, հեշտությամբ սալթաքում էին այդ  
պայքարի սխալ մեկնաբանության դիրքերը, ըստ  
որի՝ հայերն ու պարսիկները ընդհանրապես պետք  
է սխերիմ թշնամի մեան իրար, որ նրանց միջև  
պետք է թագավորի միայն անհաշտ, սերնդից-  
սերունդ անցնող ատելությունը և այլն: Նման  
շեղումներ, բարեբախտաբար, չենք նկատում Ալի-  
շանի մոտ: Ճիշտ է, իր բանաստեղծություններում  
նա բազմիցս կոչ է անում անհաշտ պայքարի  
եղնել թշնամիների դեմ, ոչնչացնել Հայաստան  
մտած հրոսակներին, բայց հեղինակը նախ՝ դրան-  
ցից այն կողմ չի անցնում և երկրորդ՝ դա արվում  
է՝ եղնելով իր սիրելի հայրենիքը ազատված տես-  
նելու տարիներ շարունակ փայլալած իղձից,  
մի իղձ, որը նրան, այնպիսի, վիճակված չէր իրա-  
կանացած տեսնելու...

Այս բոլորից հետո հարց է ծագում. ինչպե՞ս  
էր Ալիշանը պատկերացնում իր շատ սիրելի  
հայրենիքի ազատությունը, ինչպիսի՞ հասարակա-  
կան-քաղաքական կարգ էր երազում նա Հայաս-  
տանի համար:

Եվ այս հարցը պարզելիս մեր առջև կրկին  
կանգնում է Մխիթարյան կրոնավորը: Իր բազ-  
մաթիվ բանաստեղծություններում կոչ անելով  
ոտքի եղնել, պայքարել, թոթափել ստրկության  
լուծը, Ալիշանը Հայաստանում կամենում էր վերա-

կանգնված տեսնել Ֆեոդալական Հայաստանի վարչատնտեսական կարգը: XIX դարում ապրող վարդապետն, այսպիսով, կամենում էր Հայաստանում տեսնել V դարի կարգերը: Սակայն սա ոչ թե Ալիշանի մեղքն էր, այլ նրա ողբերգությունը, որ արդյունք էր նրա ապրած միջավայրի:

Իտալական ուսուցիչի անկումից հետո, 50-ական թվականներից, Ալիշանի բանաստեղծություններում կրկին երևան են գալիս հուսահատական տրամադրություններ և ամենուրեք աստղծուն որոնելու ձգտում:

1851 թվականին Ալիշանը մեկնում է Լոնդոն՝ Ռաֆայելյան վարժարանի հետ առնչվող գործերով:

Սա երրորդ ուղևորությունն էր, որ կատարում էր նա իր կյանքի ընթացքում, միաբանության անդամ դառնալուց հետո: Եթե առաջին երկու ուղևորությունները արդյունավետ եղան նրանով, որ Ալիշանը իր ճանապարհին եղած քաղաքներում քննեց հայկական ձեռագրերը, պատմական և հնագիտական արժեք ներկայացնող հուշարձանները, Հռոմի գրադարաններում գտավ և ուսումնասիրեց մի շարք հայերեն ձեռագրեր և հարուստ փաստական նյութ բերեց իր գիտական ուսումնասիրությունների համար, ապա այս ուղևորությունից վերադառնալով, նա իր հետ բերեց 25 բանաստեղծություններ, որոնք գրել էր ճանապարհորդու-

Թյան բնթացքում: Այդ գործերի մեծ մասն ար-  
տահայտում է հեղինակի բուն կարոտը դեպի  
հայրենի երկիրը: Հայրենի երկրի հանդեպ պան-  
դուխտի տածած կարոտն Ալիշանը երբեք այնքան  
ուժեղ չի երգել, ինչպես այս գործերում: Ահա  
գրանցից մեկը:

Անծանօթից ինձ հանդիպեալ եւ ասեն  
Ողջո՞յն ընդ քեզ պանդուխտ, գիա՞րդ վայրքս իցեն.  
Է՞հ, պանդրխտի մի՛ տայք ողջոյն, զի ոչ է.  
Ձայն ողջունիդ առ ունկն իմ՝ զօղ լոկ հընչէ.  
Ես չգիտեմ ինչ ըզվայրաց կերպարան,  
Բայց զի օտարք եւ հայրենեացս աննըման:  
Ողջոյն, ո՞հ, այն ողջոյն՝ զոր տան սիրելիք.  
Վայր՝ այն եւեթ, վայր՝ որ կոչին հայրենիք.  
Այն ողջոյն՝ զեղ է սըրտի ցօղ զովարար,  
Որ ըզարտմեալս առնէ ծաղկունս իսկ դալար:

Ամենուրեք, ամեն քաղաքիսում բանաստեղ-  
ծըն իր մենակությունը փարատելու համար որոնում  
է հայրենի հուշարձաններն ու հայրենիքը հիշեցնող  
վայրերը: Ոչինչ, ոչ Լոնդոնն իր համբավալոր  
Թանգարաններով ու հուշարձաններով, ոչ Փարիզն  
իր գեղեցկություններով, ոչ Վաթերլոյի դաշտն իր  
պատմական հուշարձանով՝ Նապոլեոնին սիմվոլաց-  
նող առյուծով, ոչ էլ չքնաղ Բրյուսելն ու Լա-  
Մանշը հայրենասեր բանաստեղծին մոռացնել չեն  
տալիս իր հայրենիքը: Եվ նա իր անպարփակ,  
անեզր կարոտը թափում է բանաստեղծություն-  
ների մեջ:

Ո՛հ, կարօ՛տ, կարօ՛տ, զի՞նչ բուռն ի մարդում  
քան դայս կիրս,  
կարծեմ անմահից անգամ դու ըզսա, ՚րհավիրս  
Ո՛հ, կարօ՛տ, կարօ՛տ, մեծ հեղձամբղձուկ զիս առնէ,  
Յափունս բացական, եւ այցելու ինձ ոք չէ...

...Երանի ինքը թռչուն լինիր, կարողանար  
թռչել-անցնել այս անծայրածիր օվկիանոսն ու  
տեսնել հարազատներին: Երանի զեփյուռ դարձած  
գեթ մի պահ կարողանար դգվել իր սիրելի ընկեր-  
ներին, համբուրել նրանց դեմքը, ուրախության  
ջերմ խոսքեր շշնջալ նրանց ականջին: Որքան  
ծանր, անտանելի է մենակությունը, օտար ու ան-  
հրապույր միջավայրը: Կարծես այս խորթ, անծա-  
նոթ մարդիկ անում են ամեն ինչ, որպեսզի ավելի  
վշտացնեն տարագիր պանդուխտին, ավելի շատ  
շեշտեն նրա անօգնական վիճակը:

Որ այս սրտմաշուկ կարոտի մեջ ավելի ուժ-  
գին արտահայտված է դեպի հայրենիքն ու հարա-  
զատներն ունեցած զգացումը, այդ որոշակիորեն  
նկատվում է ամենուրեք: Բանաստեղծություններից  
մեկն, օրինակ, սկսվում է «Կրկնակի պանդուխտ  
եմ դարձել իմ հայրենիքից ու մտերիմներից»  
ձևով, և մինչև վերջ էլ հեղինակը զարգացնում է  
այդ միտքը: Հայրենիքի կարոտի այս հին, ցավոտ  
մորմոքն էր, որը տեսանք Ալիշանի սկզբնական  
շրջանի գեղարվեստական ստեղծագործության մեջ,  
որը կրթոտ ու շոնդալից հայրենասիրության փոխ-  
վեց երկրորդ շրջանի սկզբում և այժմ էլ շարու-

հակում էր արցունքներ քամել բանաստեղծի  
աչքերից...

Այս բանաստեղծությունների գերակշիռ մասը,  
«Բանք պանդխտի» խորագրի ներքո, ամփոփված  
են «Նուագք»-ի 5-րդ հատորում: Պանդխտության  
մեջ իր այրող կարոտը մեղմելու համար Ալի-  
շանը թարգմանում է Բայրոնի «Չայլդ Հարոլդ»  
պոեմի չորրորդ երգը, և այս թարգմանությունն  
առավել հստակությամբ բացահայտում է Ալիշանի  
ժանր հոգեվիճակը: Հայտնի է, որ «Չայլդ Հարոլդ»  
պոեմի չորս երգերը իդեական տեսակետից տար-  
բերվում են իրարից: Ի տարբերություն առաջին  
և երկրորդ երգերի, ուր հեղինակը պատկերել է  
իրեն հասարակութունից վեր դասող, այդ հասա-  
րակության օրենքները արհամարհող անհատին,  
որը փառաբանում է կռիվը, տարերայնությունը,  
բուռն ու անկաշկանդ կրքերը, չորրորդ երգի հերո-  
սը հանդես է գալիս որպես տիեզերական վշտի  
երգիչ: Նա հիասթափվել է ամեն ինչից, մարդկան-  
ցից, միջավայրից, իր ճակատագրից և տեղ չի  
գտնում իր համար, որովհետև կորցրել է հոգեկան  
անդորրը, երջանկությունը: Հիշյալ տրամագրու-  
թյունները բազմաթիվ զուգահեռներ ունենին Ալի-  
շանի տրամագրության հետ: Առհասարակ Ալի-  
շանը շատ է սիրել ու կարդացել Բայրոնին,  
Լոնդոնում եղած ժամանակ այցելել է նրա տուն-  
թանգարանը և հիացմունքով նկարագրել այն:

Երկրորդ շրջանի վերջերից սկսած՝ Ալիշանի մոտ կրկին շատանում են կրոնա-միատիկական բանաստեղծությունները, նա սկսում է հուսահատորեն աղոթել, կամ գրել մռայլ, հոռետեսական բանաստեղծություններ: Այսպիսի բանաստեղծություն է 1858 թվականի ապրիլ ամսին Շաղամալեպո-ում տպագրված «Լուսընկայն դերեդմանայ հայոց»-ը, որը առավել հստակությամբ ցույց է տալիս, որ 40-ական թվականների վերջերին մարտու մրրիկ երգող բանաստեղծը այժմ հակվել էր դեպի միատիցիզմն ու հոռետեսությունը: Բանաստեղծությունն սկսելով գեղեցիկ մի պատկերով, որ լուսնյակը «աստվածավառ լապտեր է»՝ դրված երկրն քամ գիշերն առաջնորդ լինելու համար, հեղինակը գրում է.

Կացի՛ր արև, ետ կացիր, մ՛ ե՛լներ յերկինքըդ

կապույտ

Թող լուսնեկիդ ի ման դալ, դեռ ի մեջ թուխ

ամպերույտ.

Կա՛ց, կա՛ց լուսնակ, դու առաջ, լեռնե ի լեռ, սարե

սար,

Մեջ ձորերուս, խորերուս, անցիր հուշիկ հավասար.

Քեդ հետ ունիմ ես դանդաս, քեդ նահապետն

ունի բան,

Սիրտըն յերկուս է ճըղքած և ցավերն, ո՛հ, դանադան:

Հեղինակն սկսում է մի սրտառուչ ողբ, աղև-խարշ սուգ ու լաց իր ավերված հայրենիքի ու ոտնահարված հուշարձանների համար: Ինչպես և

նախորդ գործերում, այստեղ ևս Ալիշանը պատմությունից դուրս է կոչում հայոց անցյալի փառքը կազմող մարդկանց՝ Հայկին, Արամին, Տրդատին, Վարդան և Վահան Մամիկոնյաններին, հիշելով նրանցից յուրաքանչյուրի կատարած մեծագործությունները հայրենիքի համար, շեն ու ծաղկուն հին Հայաստանը հակադրում է մուսլ ներկային:

Ա՛հ, գերեզմանքն են հայոց, որ ոչ ևս են  
յաշխարհի,  
Մաշած նըշխարք մեր հարանց, թաղված ի խոր  
խավարի:

Այսպես, ամենուրեք գերեզման է ու մահ, ամենուրեք փուլած են անտեր ու անթաղ մեռելներ, համայն Հայաստանը դարձել է մի վիթխարի գերեզմանոց: Իր ավերված հայրենիքի համար, ու այդ հայրենիքի վրա դառնորեն ողբում է Նահապետը, լալիս է անսփուփ ու միայնակ:

Քիչ ավելի ուշ, 1863 թվականին Ալիշանը գրում է «Հայ հանճար» բանաստեղծությունը, որը «Բաղմավեպ»-ում չի տպագրվել և առաջին անգամ հանդես է եկել «Հայրունի» հատորի երկրորդ հրատարակության (1867) մեջ: Քիտենք, որ դրանից մի տարի առաջ, 1862 թվականին տեղի էր ունեցել Ջեյթունի հռչակավոր ապստամբությունը, որն անսահման ողևորությամբ էր համակել ամբողջ հայությանը, և որի մասին

այնքան դրվատական բանաստեղծութիւններ էին  
դրել հայ բանաստեղծները: Այդ տրամադրութիւնն  
էլ որոշակիորեն նկատելի է «Հայ հանճար»-ում:  
Բանաստեղծութեան սկզբում հեղինակը ողբում է  
հայրենիքի անցած փառքը, որ՝

Այն աշխարհ, որ շատ աշխարհաց մայր էր,  
Որ սիւնեց զազգեր մինչ ի ծայր երկրի  
Արդյամբք իր հողուն, մատամբք ճարտարի  
Լեցուն գրկերով տաներ ու բերեր,  
Զանազան բերքեր,  
Անցե՛ր է, անցեր:

Այս ձևով սկսվող բանաստեղծութիւնը, սա-  
կայն, ավարտվում է ողևորութեան ուժեղ շեշտե-  
րով. թեև Հայաստանն այժմ զրկվել է իր նախ-  
կին հղորութիւնից ու մեծութիւնից, թեև չունի  
Պարսկաստանն ու Բյուզանդիան ցնցող իր հե-  
րոսները, չունի նախկին փառքից ու պարծանքից  
ոչինչ, բայց Հայաստանը քանդված ու մոխրա-  
կույտ չէ, անկենդան անապատ չէ, որ՝

Հայաստան անկեր,  
Բայց ո՛չ է անցեր.

Իսկ բանաստեղծութեան վերջին քառյակում  
Ալիշանը կրկին դառնում է նույն կրակոտ հայ-  
րենասեր բանաստեղծը, ինչ-որ էր, ասենք, 1849  
թվականին.

Կերդնու Նահապետ, կանչե ձեզ հայե՛ր,  
Հանճարն է մեզ կյանք, ըզնա վառեցեք

Մեծ, պղտիկ՝ այտոր սիրով վառվեցեք: ...  
Ծագե՛ հայ հանճար, փայլե բյուր բոցեր,  
Իմանա՛ն ազգեր,  
Թե հայք չե՛ն անցեր:

Այս Ալիշանի հայրենասիրական քնարի վերջին սյուսթիումն էր և միաժամանակ գաղաթնականոր թանաստեղծությունների ասպարեզում, որին նա այլևս երբևք չհասավ:

\* \* \*

Պոեմներն ընդգրկում են Ալիշանի ստեղծագործության ամբողջ ժամանակահատվածը, գրեթե ամենասկզբներից մինչև ամենավերջը: Առաջին պոեմը՝ «Միհրան Յայգախոհք», գրվել է 1841 թվականին: Պոեմն ընդհանրապես, և նրա կրոնական բնույթի վերջաբանը հատկապես, նրան դարձնում են հիմնականում կրոնական-կլասիցիստական գործ, որը շատ զուգահեռներ ունի ինչպես Մխիթարյան նախորդ հեղինակների, այնպես էլ Ալիշանի առաջին շրջանի գործերի հետ: Սակայն որոշ նամանությամբ հանդերձ, սույն պոեմը զգալի խոտորումներ ունի կլասիցիզմից: Նախ՝ «Միհրան Յայգախոհք»-ը չունի կլասիցիստական պոեմների հատուկ որոշակի և հստակ սյուսթեմային գիծը:

Հայտնի է, որ այդ ուղղությանը պատկանող պոեմներն ունեն իրենց նախապատրաստությունը, դեպքերի դարգացման շաբաղրանքը, կուլմինա-

ցիան, ապա լուծումը: Այդ բանը չկա Ալիշանի պոեմում: Ինչպես տեսանք, դա փաստորեն հեղինակի ողբն էր իր ընկերոջ մահվան առթիվ, և թեև այդ ողբի ընթացքում վերարտադրվում են այս կամ այն դեպքերը, բայց դրանք բնավ էլ սյուժե չեն կազմում և հաճախ իրար հետ ոչ մի կապ չունեն:

Այս բոլորից հետո պարզ է, որ վերոհիշյալ պոեմի ստեղծումով հեղինակը զգալի ճեղքվածքներ է առաջացնում կլասիցիզմի ուղղության մեջ և սովորական պոեմ ստեղծելու ուղին հարթում<sup>1</sup>: Այդ ամենն Ալիշանը դարգասցրեց հաջորդ՝ «Դատաստան Վասակայ մատնչի» պոեմում և իր ավարտին հասցրեց «Պլպուլն Սվարայրի»-ում:

1847 թվականի հոկտեմբերին «Բազմավեպ»-ը հրատարակում է Ալիշանի՝ «Նահապետ» ստորագրությունը կրող ընտիր գործերից մեկը՝ «Պլպուլն Սվարայրի» պոեմը: Վերջինս ոչ միայն Ալիշանի, այլև XIX դարի հայկական հայրենասիրական քնարի լավագույն նմուշներից մեկն է, որի մասին դրվատանքով են արտահայտվել հայ իրականության գրեթե բոլոր նշանավոր գեմքերը: Պոեմը թարգմանվել է ուսներեն (հատվածներ. թարգմ. Վ. Բրյուսով), իտալերեն (հատվածներ. թարգմ. է. Տեղա), գերմաներեն (ներածությունը. թարգմ. Ա. Հովհաննիսյան և Սրտուր Լալատ),

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս մեր «Հայկական կլասիցիզմի մի քանի գծերը» հոդվածում: «Տեղեկագիր», 1957, № 12:

իսկ հայերենն ունեցել է մի քանի հրատարակութ-  
ւոյուններ: Թե որքան բարձր է դնահատվել Ալի-  
շանի այս պոեմը, վկայում է նաև այն հանդաման-  
քը, որ նրա հեղինակին ժամանակակիցները տվել  
են «Ավարայրի սոխակ» մականունը, իսկ պոեմը,  
մասնակիորեն կամ ամբողջութեամբ, մի քանի ան-  
գամ արտատպել են հայկական զանազան պարբե-  
րականներ:

«Նահապետի» ցիկլին պատկանող մյուս գոր-  
ծերի նման սա ևս խոսակցութեամբ է սկսվում և  
վերջանում խոսակցութեամբ, այն փոքր տարբե-  
րութեամբ, որ սկզբում հեղինակը դիմում է լուս-  
նյակին, իսկ վերջում, կռվից հետո, Ավարայրի  
զաշտ եկած սոխակին: Պոեմի սկզբում, դիմելով  
լուսնյակին, հեղինակն ասում է.

Ո՞նց դաս իմ լուսնակ հեզիկ ու հանդարտ  
Համասփյուռ լուսովդ ի լեռ, ձոր և արտ,  
Եվ ի Նահապետս՝ որ մըտոք մոլար  
Գիշերաժամիկ ժուռ դամ յԱվարայր  
Ուր քաջ ու աննման հարք մեր հայկազունք  
Ընկան դեռ հսկա, կանգնեցան զվարթունք:

Սա ոչ թե խոսակցութեան է, այլ ավելի շուտ  
հեղինակը մտորում է բարձրաձայն և իր խոհերին  
հաղորդակից անում լուսնին: Գեղարվեստական  
ստեղծագործութեան այսպիսի ձևը ավելի աշ-  
խույժ ու դինամիկ է դարձնում պոեմը:

Այնուհետև, թշնամիների դեմ մղվող ահեղ  
ճակատամարտում հայրենիքի ազատութեանը

պաշտպանելու համար ընկած քաջ ու առաքինի  
հախնինների հետնորդներին գիմելով, նահապետն  
ավելացնում է.

Թե կիսահողի պըլպուլիս նըման  
Ձենիկս հասնի ձեզ, որդի՛ք Թորգոմյան,  
Որդի՛ք, որոնց հարք քաջք ու առաքինիք  
Լըցուցին զգաշտեր, գըրքեր ու գերկինք,  
Թե ի ծով սրտիդ կաթիլ մ' արուենիկ  
Կաթե հայ աղբյուրն կամ Պահլավիկ,  
Թե զփառքն հայրենյաց ձեզ այլ գըրք փառս,  
Հետ նահապետիս ելեք ի յԱրտագ:

«Քաղցրազրուցիկ» «Պըլպուլը» Եղիշեի հողին  
է, որ ձմեռն անասպատում լաց լինելով է անց-  
կացնում, իսկ ամառը գալով Ավարայր կանչում է  
Վարդանին՝ իրեն ձայնակից լինելու համար: Այս  
գեղեցիկ պատկերի միջոցով հեղինակը սիմվոլաց-  
նում է Ավարայրի երկու հերոսներին՝ Եղիշեին  
ու Վարդանին, որոնք չնայած ընկան, բայց հա-  
վերժ կենդանի են սերունդների հիշողության  
մեջ: Ըստ որում Ալիշանի Եղիշեն ամենևին էլ  
այն մոլեռանդ կրոնավորը չէ, ինչպես նրան հա-  
ճախ ներկայացրել են Մխիթարյան մի քանի  
գրողներ: Ինչպես ճշտորեն նկատում է ակադ.  
Ա. Տերտերյանը՝ «Ալիշանի մոտ Եղիշեն որևէ  
կրոնական հանգամանք չունի, նա հանդես է դա-  
լիս իբրև մի քաջ, մահից չվախեցող և որոշ  
նպատակի հաստատապես ձգտող կորովի գործիչ»:  
Եվ իրոք, Եղիշեն բոցաշունչ հայրենասեր է ազա-

տագրական պատերազմի գաղափարական ղեկավարը. այդ շատ գեղեցիկ ձևով է պատկերել Ալիշանը: Ընդհանուր առմամբ՝ գեղեցիկ պատկերներն ու համեմատությունները, պատկերաձոր խոսքը հատկանշական են Ալիշանի պոեզիայի համար, սակայն այստեղ, «Պլպուլն Ավարայրի» պոեմում այն հասնում է իր գագաթնակետին: Ահա թե ինչպես է նկարագրված ռազմադաշտը՝ ճակատամարտի նախընթաց գիշերը.

Կես գիշերն առել էր գիշերավար  
Լուսնակն ամպի տակ բացխրիիկ խաղայր  
Մինչ հովն շքրջկոտ կախ թևոքն յանտառ  
Օդոց և ծառոց հանգիստ կու կարգայր:

ՁԱվարայրի մութն և կանաչ ծոցիկ  
Ծայրե ծայր ճըղքեր Տըղմուտն հանդարտիկ  
Մետաքսանման անձայն խատուտիկ  
Թավլեցընելով հազար բյուր ավիբ:

...Բայց այդ հանգստությունն առերևույթ է. երկու կողմն էլ տենդագին պատրաստվում են հաջորդ ահեղ օրվա համար: Այդ գիտեն բոլորը, գիտե և ինքը Վարդանը, որ գիշերային տարածամ պահին մենակ ու մտադրաղ շրջում է դաշտում, մտածելով այն վաթսուհի հազար «դադրած քաջերու» մասին, որոնց նա առավոտյան պետք է կռիվ առաջնորդի: Հայոց բանակն իր անվեհեր զորավարի ղեկավարությամբ բազմաթիվ հաղթանակներ է շահել, շատ անգամ փախուստի մատնել հայրենի երկիրը խուժած և նրան ստրկացնել ցանկացող ոսոխներին:

Եւ այսօր էլ, ահեղ ճակատամարտի նախօրյակին,  
միանգամ ես Վարդանը մտքում կշռադատում  
է իրադրությունը, կռահում նենգ ստիսի բոլոր  
հնարավոր մեքենայությունները՝ նրան արժանի  
հակահարված տալու համար: Այդպես է արել Վար-  
դանը, հիսուն ճակատամարտեր շահելու իր հարուստ  
փորձից ելնելով, և այդպես էլ անում է այժմ,  
մտազբաղ ճեմելով համակ քուն մտած վիթխարի  
ազմաճակատում:

Բացվում է հաջորդ՝ արյունալից օրվա առա-  
վորը.

Դեռ չէ արեղակն ըզղլուխըն հանել,  
Երկու բանակներն ըզգաշտն են բըռնել  
Ձեռ ջուխտակ բերդեր դեմ առ դեմ կանգնել  
Յիրար կուգեն գալ փշրիլ ու փրշրել:...

Մեկ շարժումն ահեղ, մեկ ահեղ հոսան  
ՁԱրտադն է բըռներ թնդմամբ կայծական,  
Ոչ լուկ պատերազմըն թըշնամության  
Այլ գտարերքն ամեն կարծես ավրել գան:

Արյունոտուշտ կռիվը բորբոքվում է, բանակնե-  
րը վիթխարի բերդերի նման իրար են բախվում,  
վիրավորների ու ոտքի տակ ընկնողների ցավա-  
դին ճիչերը օդն են սղոցում, ձիերի ու մարդկանց  
ոտնատրոփից թնդում է Ավարայրի դաշտը և  
թվում է, թե մոլեգնած մարդիկ կամենում են  
տիկզերքն անգամ քար ու քանդ անել: Ու իրար  
կոտորող, իրար խողխողող այդ ահուկի զանգվա-  
ծի մեջ, կայծակի նման աջ ու ձախ է նետվում

հայոց քաջերի հողին՝ խիզախ վարդանը, ոգևորում է հուսահատվածներին, կռվի, սխրանքների է կոչում խիզախներին, հորդոր է կարդում վախկոտներին:

Հանց խառըն խըմբեն քաջ մի հեծելվոր  
Բարձր երիվարի վըրա կանգնավոր,  
Վեր վեր վաղելով դինուք ճոճավոր,  
Նետվի թշնամյաց մեջ քանց դունտ հրավոր:

Պըղինձ դըլխանոցն ու գրեհ երկաթի  
Արևուն շողեն կու փայլվալկըտի,  
Ճերմակ փետուրներն ի սաղավարտի՝  
Կարծես թըսցընեն ըղբաջ գոյն մանկտի:

...Արյունը հոսում է Տղմուտ գետի նման,  
դաշտի խոտերն ու ծաղիկներն անգամ կարմրում  
են, և թվում է, թե օդն էլ արյան փոշով է հագեցած:  
Ընկնում են պարսիկները, փղերի ու ձիերի  
ոտների կոխան գառնում, ընկնում են շատերը  
նուե հալ ավաղանուց, դինվորներից, պատերազմի  
դեկավարներից: Ընկնում են անվեհեր Գարեգինը,  
Ռոստոմը, Վռամիկը, շուտով ընկնում է Արշակը,  
թշնամուց խոցված իրենց մահն են գտնում Արշավիրը,  
Արտակը, Սորենը...

Արյունոտ ալդ պալքարում ընկածներին ու  
ընկնողներին նկարագրելով, Նահապետը մրմընջում է.

Վասըն քո ընկան, աշխա՛րհ իմ հայոց,  
կըտրիճք աննըմանք վեհք հյուսիսայնոց:

Եվ վերջապես՝ թշնամուն ահռելի ջարդեր տա-  
լուց հետո ընկնում է նաև Վարդան Մամիկոնյանը:

Եվ իբրև արժվին ի սարից քարանց  
Սլացավ ի դընդե քաջացն հայկազանց  
Մեկիկ նիզակավ ընդ Պարսից գունդն անց  
Նե՞տ էր որ թըռավ թե՛ հուր փայլականց...

Սոսկացան սրբացան սլարսիկըն հասլըշտասլ  
Աչք քաջին սրիռեց նոցա սև սարսափ  
Գիշերըն խոնավ իջավ գինշ տարափ...  
Լու՛ռ կացեք... Վարդանն է հոս ի մըրափ...

Պոեմն ավարտվում է մի գեղեցիկ պատկերով:  
Ռազմադաշտն է, պատերազմից հետո: Մարտն  
ավարտվել է: Ամենուրեք արյան մեջ թափված  
են հայերի ու պարսիկների դիակները: Գիշեր է,  
թագավորում է ծանր, մեռելային լռությունը: Եվ  
հանկարծ, մեռելների այդ թագավորության մեջ,  
անկենդան դաշտում երևում է մի կենդանի անձ-  
նավորություն: Նա շրջում է արագ ու փութկոտ,  
աշխատում դիակների մեջ դտնել ինչ-որ մեկին:  
Դա Եղիշեն է: Նա կանգ է առնում Վարդանի դիա-  
կի առաջ: Մեռած—լռած դաշտի վրա տարածվում  
է Եղիշեի սրտակտուր ողբը՝ «Վարդան, Վարդան»:  
Եվ Եղիշեին ձայնակցելով, ամեն առավոտ դա-  
լով նույն տեղը, բլբուլն էլ կանչում է՝ Վարդան,  
Վարդան...

Բնորոշ է պոեմի վերջին քառյակը, որը հըս-  
տակ ցույց է տալիս, թե ինչպես Ալիշանը պատ-  
մական թեմատիկայով դրված երկերը անպայման

կապում էր իր ժամանակի հուզող գեպքերի հետ,  
այսպիսով արժարժելով ժամանակաշրջանի կա-  
րևոր խնդիրները: Դիմելով բլրուլին բանաստեղծն  
ասում է.

Կանչե՛ սլըլսուլիկ, կանչե՛ հողեձայն,  
Որ յերկնուց ի վայր հայի և վարդան,  
Հիշե՛ զՀայաստան տուն յուր սիրական,  
Հայաստան հիշե՛ զյուր կարմիր վարդան:

Այսինքն՝ հեղինակը որոշակիորեն կոչ է անում  
չմոռանալ «Կարմիր վարդանին», այն մարդուն,  
որն ընկավ իր հայրենի երկրի ազատության հա-  
մար:

«Պլպուլն Ավարայրի» պոեմը ջերմորեն սիր-  
վեց ու գնահատվեց հայության կողմից, որպես  
հայրենասիրական ջերմ շնչով գրված մի ստեղ-  
ծագործութուն, որպես ժամանակի պահանջներից  
բխող գործ, իսկ նրա հեղինակը կանգնեց հայ  
հայրենասեր բանաստեղծների առաջին շարքերում:

Վարդանի ու վարդանանց հերոսամարտը հայ  
իրականության մեջ բազմիցս ոգեշնչել է վիպա-  
սաններին ու բանաստեղծներին: Ոմանք այն մեկ-  
նաբանել ու գովերգել են որպես զուտ կրոնական  
ու կրոնի համար մղվող մի պայքար, իսկ պատե-  
րազմում ընկածներին ներկայացրել որպես նա-  
հատակ-սրբեր: Մյուսներն Ավարայրը գիտել են  
որպես հայերի փառավոր հաղթութունը, ուր  
«Հայկա որդիք» հեշտ ու հանգիստ ջախջախել են

թշնամուն, ուր Վանկ հայ զհազար պարսս կոտորէր: Այս կարգի գործերից ի վերջո մնում է այն տպավորութիւնը, որ հիշյալ ճակատամարտը առանց նույնիսկ լուրջ ճիգերի ձեռք բերված է ժանադին հաղթանակ է եղել: Հարկ ենք համարում ընդգծել, որ Ալիշանի «Պլպուլն Ավարայրի» պոեմում նման շեղումներ չենք տեսնում: Ծիշա է, շարադրանքի ընթացքում կրօնը շարունակում է զգացնել տալ իրեն, բայց, ինչպես տեսանք վերլուծութիւն ընթացքում, ամենուրեք հեղինակը ելնում է այն առողջ մտայնութիւնից, որ պայքարը նախ և առաջ մղվում էր հայրենիքի ազատութիւն ու պաշտպանութիւն համար: Գալով երկրորդ կարգի շեղմանը, հայագետ ու պատմաբան Ալիշանը հիանալի գիտեր, թե որքան մեծ դոհեր է տվել հայ ժողովուրդն Ավարայրում, որը գեղեցիկ կերպով վերարտադրված է պոեմում, և նա ոչ մի ավելորդ գովասանք չի շռայլում:

«Բազմավեպ»-ի 1848 թվականի փետրվար ամսվա համարում տպագրվում է Ալիշանի հաջորդ՝ «Ի մահ Տրդատայ ահեղագորն արքայի հայոց» պոեմը, ուր հեղինակը շարունակում է զարգացնել հայրենասիրական ու ազատասիրական այն տենդենցները, որոնք նա արժարժել էր նախորդ գործերում: Պոեմը ողբում է հայոց քաջարի արքա Տրդատի մահը, անօգնական ու անպաշտպան մնացած Հայաստանի վիճակը, կոչ անելով համայն բնութիւնը՝ ողբակից լինել իրեն.

Ի լերանց Դարանաղեաց, ի լերանց Դարանաղեաց  
Գեաս արտասուաց իջուցէք, քաջք Հայաստանեայց  
և ուրուականք,

Յամպախաղացն Այրարատայ իջցեն սահանք  
յարտօսր աղի

Գոյժ մեծ յարձադանդաց ու արձադանդս յորդորեսցի:

Տրդատն սպանվում է որսորդութիւն ժամա-  
նակ դադտագողի, թիկունքից, դավաճանի կողմից  
արձակված նետով, որովհետեւ ոչ մի մահկանացու  
չէր կարող դեմ-դիմաց կռվելով սպանել նրան:  
Չնայած նա արդեն ծերացել էր, բայց սոսկ նրա  
Ֆիզիկական ներկայութիւնը բավական էր աճ ու  
դողի մեջ պահելու թշնամիներին: Չկան այլևս  
Հայաստանը միավորող, շէնացնող ու նրան օտար-  
ներից պաշտպանող Տրդատը: Նրա մահվանից  
սիրտ առած, թշնամիներն սկսում են արշավել  
Հայաստանի վրա, արյուն ու ավեր սփռել, կոտո-  
րել ու թալանել: Հայ նախարարներն ու իշխան-  
ներն էլ, փոխանակ միասնական ուժերով թշնա-  
միների դեմ ելնելու, զբաղված են ներքին երկ-  
պառակութիւններ սերմանելով, թշնամութեամբ,  
մատնութիւններով:

Այսպես է ավարտվում հիշյալ պոեմը, և նրա  
մռայլ, հոռետես ոգին շատ զուգահեռներ ունի  
Հայաստանի ու հայ ժողովրդի այն ժամանակվա  
նույնպիսի մռայլ ու անհեռանկար իրականութեան  
հետ:

Պատկերելով իր սիրելի հայրենիքի անհեռա-

նկար վիճակը, Ալիշանը, սակայն, որոշակիորեն  
զգացնել է տալիս, որ պետք է դանել այն նոր,  
հզոր Տրդատին, որը կկարողանա ազատագրել  
հայրենիքը օտարերկրյա նվաճողներից:

Իր հաջորդ՝ «Աշոտ Երկաթ ի ծովուն Սեփա-  
նա» պոեմը, ամենայն հավանականությամբ, Ալի-  
շանը գրել է 1849 թվականին: Սույն պոեմը նա-  
խորդից տարբերվում է նրանով, որ ունի կուս-  
սյուժե: Պոեմի նյութը Աշոտ Երկաթի կյանքի  
հերոսական մի գրվագն է:

«Պլպուլն Ավարայրի»-ից հետո «Աշոտ Եր-  
կաթը» երկրորդ պոեմն է, որ Ալիշանը գրել է  
աշխարհաբար: Այս հանդամանքը, անշուշտ, տվել  
է իր որոշակի գրական արդյունքը: Պոեմը շատ  
ավելի մատչելի ու հասկանալի է դարձել և առանց  
չափազանցության, կարող է Ալիշանի լավագույն  
գործերի շարքը դասվել: Պոեմն սկսվում է Հայաս-  
տանի բքաշունչ ձմեռվա գեղեցիկ նկարագրու-  
թյամբ.

Յուրա ցուրտ ձյմռունք բրդան յարձակ հովերեն  
Սպիտակ կարվանք իջան լերանց կողերեն,  
Փըչեցին պինդ քամիներն, հա՛, փըչեցին,  
Սառով ձյունով բղսարն ու դձոբ գուղեցին.

Վարդըն քափուր վատեցավ,  
Ծիծղուն ծաղիկ ծածկեցավ  
Եվ Հայաստան սուգ մըտավ:

Սակայն, ցրտաշունչ ձմռան նման նկարա-  
գրությունը ինքնանաչատակ չէ: Այստեղ բանա-

ստեղծն ընդդժում է նախարարների սառն անտար-  
բերութլունն իրենց հայրենիքի հանդեպ: Նրանք,  
ամենեին չմտածելով հայրենի երկիրը թշնամուց  
ազատելու մասին, քաշվել-հեռացել են իրենց  
անմատչելի բերդերն ու հանգիստ կյանք են վա-  
րում: Չկա ոամիկի, ժողովրդի վիճակի բարելա-  
վումով մտահոգված մեկը:

Սուգ էր պատել մեր դեղեցիկ աշխարհին,  
Երբ դառնաշունչ հովըն փրչեց օտարին,  
Երբ հայ իշխանքըն քաշվեցան յամուր վայր,  
Ավա՛ղ ոամկին, որ մոլորեր վեր ու վայր.

Արև տեսավ՝ դեղընցավ  
Լուսնակն ու աստղիկ՝ սևացավ  
Եվ նահապետն ամբնչցավ:

Ալիշանը բնավ մտադիր չէր բավականանա լու-  
սառած-անկենդան բնութլան և դեպի հայրենիքն  
ուենցած հայ նախարարների անտարբեր վերա-  
բերմունքի պասսիվ պատկերմամբ:

Մարտատենչ ու ազատարաղձ Ալիշանը կրկին  
հանդես է գալիս իր որոտընդոստ քնարի ամբողջ  
ավլունով և անարդանքի սյունին գամում բոլոր  
նրանց, ովքեր դավաճանել են սիրելի հայրենի-  
քին ու ժողովրդին.

Ո՞վ այն մատնիչք, ո՞վ այն դահլճք, ո՞վ դադան,  
Որ առ այլազգ, առ բընավոր ձայն կու տան  
Սյդ ին՞չ քարե սիրտ, ինչ՞ սառե շըրթունք էր,  
Որ հայրենյաց հողուն կարդաց սև օրեր:  
Անե՛ծք տրվեք այն բերնին,

Անե՛ծք գըրչին ու ձեռքին  
Որ գՀայաստան մատնեցին:

Եվ անշուշտ, ինչպէս այդ ցանկանում է տեսնել իր հայրենիքի սիրով վառված Նահապետը, հանդես է գալիս Հայաստանը փրկող, օտար գերությունից ազատող դյուցազուներ, որն այստեղ կոչվում է Աշոտ Երկաթ, մի այլ տեղ՝ Տրդատ, մյուս պոեմում՝ Վարդան Մամիկոնյան և այլն: Այս է հեղինակի փարիսայած ու գուրգուրած խղեան՝ Հայաստանի համար գտնել այն խիղախին, որը քաջերի գլուխն անցած կաղատի հայրենիքը:

Աշոտ Երկաթի մարտաշունչ խոսքերը հիանալի կերպով այդ միաքնն են արտահայտում.

Ձե՛ն առեք, ժի՛ր կացեք, բնկերք իմ սիրուն,  
Հավատարիմք ձեր թագվորին, ձեր հողուն.  
Ի հաղարաց մեկիկ մնացած դուք իմ հետ,  
Գուք շատ եք, ձեզ չբավեն հաղար թուր ու նետ.

Թող աշխարհաց լուք լինի,  
Քանի որ եմք կենդանի,  
Հայաստան ո՛չ տի մեռնի:

Աշոտ Երկաթը գործում էր իր զինվորների գլուխը անցած: Նրանք միասին էին պալքարում թշնամու դեմ և միասին էլ վայելում հաղթության պտուղները: Նկարագրելով Աշոտ Երկաթի հանկարծակի հարձակումը թշնամու վրա, նրան տված ջարդը Սևանի ափին և թշնամու փախուստը, Ալիշանը բնավ չի մոռանում արքայի զինակիցներին.

Հայնժամ գոռաց հրամեց թագվոր մեր հայոց,  
Յոթանասուն աղեղք թափեն կայծ հուր բոց  
Երազ երազ դառնան ի շուրջ ծովակին  
Իրաք անցած կու հիմարի թըշնամին:

Աշտո հրեղեն գրնախ նման  
Փետե ի փայտ ցատքըտան  
Սիրտ տա քաջացն աննըման:

Ուշագրավ է, որ «Աշտո Երկաթ ի ծովուն  
Սեվանա» պոեմը դերժ է կրոնական խորհրդա-  
ծուծյուններից, չնայած հեղինակը Աշտո Երկաթի՝  
սրբավայր Սեանում պատասպարված լինելու հան-  
գամանքը կարող էր օգտագործել նման խորհրդա-  
ծուծյունների համար: Նույնիսկ վերջում, երբ  
սպասում ես, որ հանթանակը տանելու կապակցու-  
թյամբ հեղինակը պետք է կրոնական բարեմադ-  
թուծյուններ անի հաղթողներին, Ալիշանը, մի-  
անդամայն աշխարհիկ ձևով և ժամանակակից  
մտքեր արտահայտելով, կոչ է անում էլ ավելի  
ուժեղացնել պայքարը, էլ ավելի միասնական ու  
միահամուռ կերպով կշնակ թշնամու դեմ:

Հա՛ փայլիր, հա՛ սլացիր երկաթ ու պողպատ,  
Հաղրով, բյուրով թափե բոցեր անընդհատ.  
Շուրջ շողացիր ծայրե ի ծայր հայրենյաց.  
Մանրե՛, մաշե գգենք մեր ամեն թշնամյաց.

Հայոց հողուս գու կյանք տուր,  
Երկինք քեզ տա հրաթափ թուր  
Նահապետին՝ սիրտ, քանց հուր:

Մի պահ թվում է, որ գործ ունենք «Մասի-  
սու սարերն» բանաստեղծության հետ, ուր հեղի-  
նակը, գրեթե նույն բառերով դիմելով Ավագ Մասի-  
սին, նույնպես մարտնչելու կոչ էր անում:

«Աշոտ Երկաթը» Ալիշանի վերջին պոեմն էր,  
ուր բանաստեղծը հանդես եկավ այդքան առողջ  
հայրենասիրությամբ, մեծ խանդավառությամբ  
արձագանքելով իր ժամանակաշրջանի հուզող  
հարցերին:

1849 թվականին Ալիշանը գրում է իր մյուս  
պոեմը՝ «Հարսների առադասաի նախածնողացն»,  
ուր հեղինակը, խախտելով իր սովորությունը, այս  
անգամ անդրադարձել է Աստվածաշնչային թե-  
մայի:

Մեր բանասիրության մեջ այն կարծիքն է  
արժարժվել, որ այս պոեմում հեղինակը մարդկա-  
լին, զգայական սիրտ դուլքն է անում, որ Մխի-  
թարյան բազմաթիվ հեղինակներից Ալիշանն առա-  
ջինն ու միակն էր, որ կանացի սեր կրդեց: Պոե-  
մում կարդում ենք.

Սէ՛ր, դու գհամածիրն հաստատութիւն թարթիւ  
չափեալ.

Սերմանեցեր իբրև մըղեզ դաշխարհս անարիս,  
Միում միում այլազան տալով կարգս և օրէնս  
Եւ միահամուռ դաշնակելով ի մի կանոն,

Զոր դու միայն գիտես, լրտես, վարես և հաճիս.  
և այլն:

Սակայն այս, և մյուս բոլոր հատվածներում,  
 ուր հեղինակը սիրո գովքն է անում, փառաբա-  
 նում է նրան, մարդկային, երկրային սիրո հետք  
 անգամ չկա: Այդ կարգի սերը մինչև վերջ էլ ան-  
 ծանոթ մնաց Ալիշանին, և որևէ այլ բան չէր էլ  
 կարելի սպասել, որովհետև «Մխիթարյան շնոր-  
 հաշուք կաղապարի» ներքո աճող ու կրթվող վար-  
 դապետի համար անհեծքներից մեծագույնը կլինեի  
 այդպիսի սիրո թեկուզ ամենաթույլ դրսևորումը:  
 Ալիշանի իմացածը դրախտային սերն է, Ադամ-  
 Եվայի սերը, որը երգում է նա, և ի դեպ, այնքան  
 եթերային, այնպիսի երազական ձևով, որ իսկույն  
 զգում ես, որ դա կենդանի մարդու զգացմունք  
 լինել չի կարող, անպա՛ սերն առ հայրենիքը և  
 բնութիւնը: Այս է բոլորը: Կարծես այս հարցին  
 պատասխանելու համար նույն պոեմում Ալիշանը  
 գրում է.

Բացուստ ի բաց հառաչեա սիրով՝ ծովդ ալեշատ.  
 Արի՛ք առիւծունք՝ սէր ի մորեաց մըրընչեցէք  
 Հընչէ՛ք, մի՛ լըռէք, օգբ համասիիւռ, ըզսէր հընչէք.  
 Ըզսէր՝ երկինք, ըզսէր՝ երկիբ, ըզսէր, ո՛վ բնութիւն.  
 Համայն հաստուածք միարարբառ հընչեցէք սէ՛ր,  
 սէ՛ր...

Այսպես ուրեմն, սեր երկնքի հանդեպ, սեր  
 երկրի հանդեպ, սեր բնութիւն հանդեպ: Ահա այն  
 ամենը, որոնց ծանոթ է Մխիթարյան վարդապե-  
 տը: Ինչպես բերված հատվածներից, այնպես էլ  
 ամբողջ պոեմից այն տպավորութիւնն է ստաց-

վում, որ ընդհանրապես պետք է սիրել միմյանց,  
ամուր, հաստատուն սիրով, որով կհարթվեն Եզարս  
բազում: Սա միակ սյուլժեն է ամբողջ պոեմում,  
ուր հեղինակը ժամանակի հետ քիչ թե շատ  
առնչվող մտքեր է դարգացնում: Եթե չմոռանանք,  
որ սա գրվել է 1849 թվականին, իտալական դեպ-  
քերի ժամանակ, ապա պարզ կդառնա; որ Ալի-  
շանի «սիրեցեք միմյանց»-ը իր հորինած այն մի-  
ջոցն էր, որով նա առաջարկում էր բուժել հասա-  
րակությունը:

Պոեմների ասպարեզում ութ տարվա ընդմի-  
ջումից հետո Ալիշանը 1857 թվականին գրում է  
իր վերջին՝ «Շուշանն Շավարշանա» գործը, որի  
սյուլժեն ևս դուռ կրոնական է, և մեծ չափով  
իջևցնում է նրա գաղափարական արժեքը: Եթե  
Ալիշանի լավագույն պոեմների կարևոր արժանիք-  
ներից մեկն այն էր, որ դրանով հեղինակը արձա-  
գանքում էր հայ իրականության հուզող դեպքե-  
րին, վերաբերմունք էր ցույց տալիս, հարցեր  
ու պահանջներ առաջադրում և սլշն, ապա այս  
վերջին՝ «Շուշանն Շավարշանա» պոեմը, ոչնչով չի  
առնչվում հայ իրականությանը հուզող, ակտուալ  
հարցերի հետ:

Չնայած գաղափարական տեսակետից խոցելի  
կողմերին, պոեմի գրական-գեղարվեստական ար-  
ժանիքները անժխտելի են: Այդ է պատճառը, որ  
առաջին անգամ «Նուագք»-ի երրորդ հատորում  
1858 թվականին հրատարակվելուց հետո պոեմը

1897 թվականին լրիվ թարգմանվում է իտալերեն  
(Թարգմ. է. Տեղա), և առաջաբանում թարգմա-  
նիչը «Շուշանն Շավարշանա»-ն դրվատելու համար  
բառեր չի խնայում: Ո՛չ մի դործում գեղեցիկ  
պատկերների, պատկերավոր համեմատություն-  
ների, ճոխ նկարագրությունների այնպիսի առա-  
տություն չենք նկատում, ինչպես հիշյալ պոեմում:

Սոսելով «Շուշանն Շավարշանա»-ի մասին,  
ակադեմիկոս Ա. Տերաերյանը գրում է. «Այս քերթ-  
վածը Ալիշանի լավագույն դործերից մեկն է:  
Գրված է տաք շնչով և բանաստեղծական մեծ  
թափով: Կարդացվում է հետաքրքրությամբ և  
հեղինակը կարողանում է իր տրամադրությամբ  
վարակել ընթերցողին»<sup>1</sup>:

Ո՞րն է Ալիշանի պոեմների արժեքը մեզ  
համար:

Եթե մի տկնարկ նետենք մինչև Ալիշանը  
եղած պոեմների վրա, ապա կտեսնենք, որ հայ  
գրականությունը պոեմներով շատ հարուստ չէ:  
Շնորհալու «Ողբ Եգեսիոյ»-ն թերևս միակ աշխար-  
հիկ սյուժեով գրված պոեմն է, մնացածները մեծ  
մասամբ կրոնական բովանդակություն ունեն:  
Ալիշանն իր աշխարհիկ պոեմներով հակադրվեց  
նախորդներին: Նրա պոեմները այն սեպերը եղան,  
որոնք մխրճվելով հայկական կլասիցիզմի խոշոր  
շենքի մեջ, այլևս անվերականգնելի ճեղքվածքներ

<sup>1</sup> «Հայ կյասիկներ», Երևան, 1944, էջ 46:

պատճառեցին նրան: Այդ առումով, Ալիշանի գործը շարունակեցին Մ. Թաղիադյանը («Եղերգութիւն յօրհաս Թանգայ Թաղիադեանց»), Ռ. Պատկանյանը («Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը») և Ս. Շահազիզը («Լեոնի վիշաը»): Այս հեղինակներն իրենց հիշյալ պոեմներով աստիճանաբար և լիովին բացասեցին կլասիցիզմը (հասկապես վերջին երկուսը), հանդիսանալով սոմանտիկական պոեզիայի խոշոր ներկայացուցիչները հալ գրականութեան մեջ:

Մյուս արժեքավոր նորութիւններ, որ իր բանաստեղծութիւններով և պոեմներով բերեց Ալիշանը մեր գրականութեան մեջ, այդ լեզվի հարցում նրա կատարած նորարարութիւնն էր: Մինչ այդ եղած պոեմները ոչ միայն բովանդակութեամբ կրօնական էին, այլև նրանց լեզուն էլ գծվար հասկանալի ու խրթին գրաբարն էր: Ինքը՝ Ալիշանն էլ գրել է ոչ քիչ թվով այդպիսի պոեմներ ու բանաստեղծութիւններ, սակայն լեզվի հարցում նա ճիշտ կողմնորոշվեց և իր ընտիր գործերը գրեց ժողովրդի համար, ժողովրդին հասկանալի, պարզ, հստակ հայերենով, որով չէր գրել ոչ մեկը Մխիթարյան «հայրեր»-ից, ոչ էլ նախորդ մյուս հալ հեղինակներից: Ալիշանը իր լավագուշն երկերով պոեզիան դարձրեց ժողովրդի վշտերն ու տենչերն արտահայտելու կամ շնորհալից որոտով նրան կովի, «ի դէն ի վրէժ» կոչելու հզոր մի միջոց: Նա պարարտ հող պատրաստեց աշխարհիկ պոե-

զիայի դարգացման համար: Գրելով աշխարհաբարով, Ալիշանն առաջինը գործածութեան մեջ դրեց բազմաթիւ «ոամկական» գեղեցիկ բառեր, որոնք ընդմիջտ մտան հայոց գրական լեզվի բառապաշարի մեջ: Հիշենք գրանցից մի քանիսը. «տընազ», «խորոտիկ», «սոտիկ», «թաղթ», «ծոցիկ», «մանգրիկ», «թըռվըռան», «աչեր», «սիրուն», «պիտի» և այլն, և այլն:

Նրանից հետո, թեև դարձյալ լույս աշխարհեկան գրաբար դրված պոեմներ ու բանաստեղծութիւններ, թեև գրաբարամոլները հեշտ ու հանդիսաչէին կամենում զիջել իրենց դիրքերը, բայց վերջիններս Ալիշանն որդեն խարխուլ էր: Նրա գործը շարունակեցին հաջորդները:

Հարց է ծագում, որտեղից Ալիշանի պոեմների մեջ հայտնվեց այդ աշխարհիկ տարրը: Չէ որ նա էլ նույն Մխիթարյան վանքում սնված ու ձևավորված և ոգևորութեան նույն աղբյուրներն ունեցող անձնավորութիւն էր: Ինչպէ՞ս պատահեց, որ սկսելով իր նախորդների նման, նա իր ստեղծագործութեան հետագա շրջանում այդպես որոշակի դատվեց նրանցից, ապւով իր այնքան արժեքավոր գործերը:

Որ Ալիշանը, իր նախորդների նման, սնվել է պատմական գրականութեամբ ու որպէս բանաստեղծ ձևավորվել վանքի պատերի ներսում, այդ անժխտելի է, սակայն նա առաջինն էր, որ ուշագրութիւն դարձրեց հայ ժողովրդական «ոամկա-

կան» երգերին, որոնց հանդես Մխիթարյանները,  
եթե չասենք բացասական, գոնե անտարբեր վերա-  
բերմունք ունեին:

Ալիշանն առաջինն էր, որ հարց բարձրացրեց՝  
հավաքել ու գնահատել այդ երգերը, «ազգային-  
ներից» պահանջեց անտարբեր չլինել նրանց նկատ-  
մամբ. «...Փառազելի բան է,—գրում էր նա  
«Բազմավեպում»,—որ մեր ազգայինք ալ վառվին  
ազգային ավանդությանց սիրովը և ձեռքերնեն  
եկածին չալի ջանային հավաքել այնպիսի երգեր,  
անմեղ խաղեր, պատմություններ ու առակներ,  
ետքը ուրիշներուն ալ հաղորդելին, կամ առանձին  
տպագրությամբ, և կամ ազգային օրագրներեն  
մեկուն խրկելով»:

Ավելին. հետագայում մենք տեսնում ենք,  
որ Ալիշանը շատ բարձր է գնահատում այդ եր-  
գերը, մեծագույն հիացմունքով խոսելով նրանց  
մասին: «Այսպիսի երգերը,— գրում էր նա,— շատ  
անգամ ավելի լավ կիմացնեն ազգին հանճարը,  
քան թե ծանր գրվածքներ. և կդառնան անոնց  
մեջ անանկ սքանչելի գուրցվածք, որ միայն ի-  
րենց ուսմական անունին համար հասարակ բան  
մը կկարծվին, բայց ճշմարիտը՝ վերագույն գրվա-  
ծոց կարգը անցնելու են»: Եվ Ալիշանը գնահատեց  
ու սիրեց այդ երգերը: Սիրեց այնքան, որ «Բազ-  
մավեպ»-ի էջերում մաս առ մաս տպագրելուց  
հետո «Ազգային ուսմական երգեր» խորագրի տակ  
1852 թվականին հրատարակեց առանձին գրքով,

անդերեն ու հայերեն, իր թարգմանութեամբ<sup>1</sup>։  
Տասնինը ժողովրդական երգեր ունեցող այս գրք-  
քույիը միայն թերթելիս իսկ՝ ակնհայտ է դառ-  
նում, թե ինչն է գրավել Ալիշանին։ Այստեղ «Ի  
Լեոն սրգի Հեթմոյ Ա.»-ն է, ուր Լեոնը ողբում է  
թաթարների մոտ իր գերի ընկնելը, «Սուղ դստեր  
մեծ իշխանի»-ն է, ուր իշխանուհին լալիս է թա-  
թարին կին դառնալու համար, այստեղ ջուղայեցիք  
ողբում են իրենց տարադրութեանն ու հայրենի  
քաղաքի ավերվելը, այստեղ է հայոց մրմունջը՝  
«Կոռնկը»։ Այստեղ կան մի քանի ժողովրդական  
երգեր՝ «Երգ կաքավու», «Երգ արագլի», «Մանուկն  
ու ջուրը», «Ի նավակոծեալն ի ծովուն Վանայ» և  
այլն, որ հետագայում մշակեցին Մ. Պեշիկթաշ-  
լյանը, Ղ. Աղայանը, Հովհ. Թումանյանը և ուրիշ-  
ներ։

Այս է Ալիշանի պոեզիայի երկրորդ աղբյուրը՝  
ժողովրդական հայկական երգերը։ Որ «Պլպուլն  
Ավարայրի»-ն, «Մասիսու սարերն»-ը և ընդհան-  
րապես «Նահապետ» ստորագրութեանն ունեցող  
մյուս գործերը գրելիս Ալիշանը կղել է հայկական  
ժողովրդական այդ պարզ, անպաճույճ երգերի ազ-  
դեցութեան ներքո, — այդ վիճարկման ենթակա չէ։  
Զլինե՛ր այդ բարերար, թարմացնող ազդեցութեանը,  
դժվար կլինե՛ր ասել, թե կկարողանա՞ր Ալիշանը  
ստեղծել իր այնքան գողտրիկ գործերը, կդառնա՞ր

<sup>1</sup> «Հայոց երգք աամկականք», թարգմանեց անդլերեն  
Լեո վ. Ալիշանը, Վենետիկ, ս. Ղազար, 1852։

«Նահապետ հազար թոռներին» ինչպես նրան դի-  
պուկ բնորոշել է Ղ. Աղայանը: Ամենայն հավա-  
նականությամբ նա կդառնար Մխիթարյան այն  
շատ սովորական հեղինակներից մեկը, մի Ավե-  
տիքյան, կամ մի Հյուրմյուզյան, որոնց գործերը  
չընդունեց հայ ժողովուրդը, և որոնք այժմ միայն  
սակավաթիվ ուսումնասիրողներին են հայտնի:

Ալիշանի կատարած լեզվական այս նորարա-  
րության ամբողջ խմաստը հասկանալու համար  
բավական է ասել, որ նա հանդես եկավ այնպիսի  
մի ժամանակ, երբ Մխիթարյան դրական անդա-  
տանում իշխում էր Արսեն Բաղրատունին՝ գրա-  
բարի ամենակրթոտ պաշտպաններից մեկը, և որի  
«Հայկ դիւցազն»-ը բացարձակ հեղինակութուն էր  
համարվում: Այս պայմաններում, հասկանալի է,  
հեշտ չպիտի լիներ Ալիշանին՝ նոր լեզվով դրած  
իր գործերի համար ճանապարհ հարթել: Ահա թե  
ինչ էր գրում նա իր նամակներից մեկում. «Ձեռ  
ուղեր նաև այն հորձանապտույտ գրարարի և  
աշխարհարարի խնդրույն մեջ մտնել, զի երկու  
կողմն ալ փաստեր ունին, և եթե մեկն միայն  
զառաջինն ուղի ընդունիլ, թվի թե անբնական  
կլլա, իսկ եթե միայն զերկրորդն՝ և այս ինձ թվի  
անբնական: Հարկ է երկուքին ալ տեղ մը և չափ  
մը սահմանել, և կարծեմ խնդիրն այս բանի վրա  
պիտի մնա»<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Արևելեան մամուլ», 1877, № 5:

Իր այս ձգտումն էլ, այսինքն ժողովրդին հասկանալի լինելու համար գրել որքան կարելի է նրան հասկանալի լեզվով, Ալիշանը կիրառեց իր բանաստեղծությունների մեջ: Այդ հատակ կերպով երևում է նրա երկերի տարբեր հրատարակութայնների թեկուզ ամենափոքր համեմատութայնից, որտեղ նկատում ենք, որ Ալիշանի լեզուն հետըզհետե ավելի հազեցել է ժողովրդական տարրերով, հղիվելով ու մաքրվելով դարձել է ավելի գեղեցիկ ու հմայիչ: «Ալիշանի աշխարհարար բանաստեղծութայնները, — գրում է ակադ. Հր. Աճառյանը, — անհամեմատ ավելի բարձր են դրարար գրվածքներից, մի պարզուկ, միամիտ, քնքույշ քնարերգութայն ու հովվերգական անուշ դալալիկներ լցնում են ընթերցողի հոգին փափուկ զգացումներով. ճիգ, արվեստականութայն, գեղեցիկ երևալու ջանքեր չկան նրանց մեջ, ամեն ինչ սահուն է, կոկիկ ու բնական»<sup>1</sup>:

Բերենք մի քանի օրինակներ ցույց տալու համար, թե ինչպիսի հաջող պատկերներով ու համեմատութայններով գիտե Ալիշանը նկարագրել այս կամ այն երևույթը:

Լերինք ու հովիտք ընդարձակ ու լայն,  
Նախշուն դարգարին նոր հարսին նրման,  
Կասուտակ սարերդ գունըղգուն պսակ  
Կասկեն ի գլուխ զինչ նոր թագվորակ:  
(«Հայոց աշխարհիկ»)

<sup>1</sup> Հր. Աճառյան, Պատմութայն հայ նոր գրականութայն, 1906, էջ 87:

Կամ՝

Թե ի թե, ու վիզ վզի պլլլված,

Երեք կտկոն մեկ մանկադուլ հնձած:

(«Պլլուլն Ավարայրի»)

Ժողովրդական բառ ու բանի առկայությունը  
զգալի կերպով երևում է «Լուսինիայն գերեզ-  
մանաց հայոց»-ում: Ահա մի հատված.

Քո թելն երկնից արծաթեն հյուսած, պատրույրդ  
ալ ոսկի

Ազամանդե կայծակներ փռես զաստղերը շորս դի  
Նդի, մեղրի նրման կաթ մի յամանեդ յիս թափած,  
Կու խաղաղե հուղճունքս դինչ ալիք լճիս

հանդարտած:

Հաճախ էլ, իր գեղարվեստական խոսքն ա-  
վելի երաժշտական դարձնելու նպատակով, Ալիշա-  
նը դիմում է բաղաձայնների կրկնությանը, որն  
ավելի դյուրամատչելի ու ընթեռնելի է դարձնում  
ստեղծագործությունը: Սա գեղարվեստական մի  
պրիոմ է, որի բազմաթիվ նմուշներին հանդիպում  
ենք հալ դրականության ներկայացուցիչների մոտ  
և որն, անկասկած, նրանցից ժառանգել է Ալիշանը:  
Ահա մի քանի օրինակ.

Վէտ վէտ վիժեն ալիք խուն առ խուն,

Մէտ մէտ մըրցեալ մըխին մուն առ մուն:

(«Վտակն Ակոուոյն»)

Ճողճեալ ճօճի ճերմակն օղապար,

Ոտնատորոփ ճախրասլացիկ:

(«Բաջակորովն Մուշեղ ի ճակատամարտի  
Չիրաւայ»)

Կռուի առ կռուի կռիւեն կմբայք, տէգ առ տէգ.  
(«Բա՛մ. փորոտան»):

Բերել ամբողջությամբ Ալիշանի կիրառած պատկերներն ու համեմատությունները, կնշանակի արտագրել նրա գործերի մեծ մասը: Կարելի է նշել ամբողջ քառյակներ, որոնք միայն պատկերներից ու համեմատություններից են կազմված: Այսպիսին է Ալիշանի այս շրջանի գործերի բնութագիրը:

Հայրենասիրության մի վերջին բռնկման արդյունք հանդիսացավ 1870 թ. հրատարակված պատմագեղարվեստական արձակի կրկնատոր ժողովածուն՝ «Հուշիկք հայրենյաց հայոց»-ը, որի մասին հարկ ենք համարում մի քանի խոսք ասել Ալիշանի գեղարվեստական ստեղծագործության պատկերը ամբողջացնելու համար՝ թեև, ըստ էության, այդ չի մտնում մեր ուսումնասիրության սահմանների մեջ:

Մինչև այդ էլ Ալիշանը գրել էր արձակ գեղարվեստական գործեր, սկզբնական շրջանում գրաբար, որոնք հիմնականում տպագրվում էին միաբանության ամսագրում: 1845 թվականին «Բաղմավեպ»-ը «Հովիվք Շիրակայ» ընդհանուր խորագրի ներքո տպագրում է Ալիշանի չորս գրաբար պատմվածքները, որոնցից երեքը հետագայում նույն խորագրով Ալիշանը զետեղում է իր

«Նուագօր»-ներն Երրորդ հատորում, որը, ի դեպ, միակ արձակ գործն է «Նուագօր»-ներն մեզ:

Ալիշանի հաջորդ՝ «Ամսոց բնական նշանները» գործը, որ մաս-մաս տպագրվում էր 1845 թվականի «Բազմավեպ»-ի համարներում, հատկանշական է մի քանի տեսակետից: Նախ՝ ի տարբերություն նախորդի, այն գրված է գեղեցիկ աշխարհաբարով և գրանից հետո գեղարվեստական արձակի ասպարեզում Ալիշանն այլևս չանդրադարձավ դրաբարին: Եվ ապա՝ «Ամսոց բնական նշաններ»-ից սկսվում է ստեղծագործությունն Կառուցելու այն հետաքրքիր ձևը, որը, վերապահություն միայն, կարելի է երկախոսություն անվանել: Ըստ էության՝ հեղինակը բացատրելու, համոզելու եղանակով խոսում է մյուս հերոսի՝ փոքրիկ Գրիգորիկի հետ, այս խոսակցության ընթացքում բացահայտում է զանազան երևույթներն այս կամ այն հատկանիշները և, այս քանով, նշված ստեղծագործությունը երկախոսության բրնույթ ունի: Սակայն դեպքերի ամբողջ շարադրանքի ընթացքում երկրորդ գործող անձը ոչ մի անգամ խոսակցությանը չի մասնակցում, որևէ վերաբերմունք չի ցույց տալիս, որևէ հարց չի առաջադրում: Նա սոսկ լսում է իրեն տրված և իրեն ուղղված բազմաթիվ բացատրությունները, և այս տեսակետից «Ամսոց բնական նշանները» խոտորվում է երկախոսությունն Կառուցելու ընդունված եղանակից: Այս գրելաձևը

հետագայում, մոտ 25 տարվա ընդմիջումից հետո, իր ստեղծագործության երկրորդ շրջանի վերջում, կրկին կիրառեց Ալիշանը՝ հռչակավոր «Հուշիկք հայրենյաց հայոց»-ում այն աննշան տարբերությամբ, որ հեղինակի պատանի գրուցընկերն այստեղ կոչվում է Հայկակ: 1869 թվականին լույս է տեսնում «Հուշիկք հայրենյաց հայոց»-ի առաջին, իսկ 1870 թվականին՝ երկրորդ հատորը, որը մինչև այդ մաս առ մաս տպագրվել էր «Բազմավեպ»-ում, սկսած 1862 թվականից:

Այն հանդամանքը, որ հիշյալ գործը լույս տեսնելուն պես ջերմորեն ընդունվեց ընթերցող ու գիտական հասարակության կողմից, և որ նրա մասին դրական գրախոսականով հանդես եկավ Գր. Արծրունին (տես «Հայկական աշխարհ», 1870, № 9—11), տարիներ անց խիստ դրվատական հոդված գրեց Ա. Չոպանյանը՝ «Հուշիկք հայրենյաց հայոց»-ը անվանելով «պաշտելի գիրք» (տես «Անահիտ», 1902, № 4), խոսում էր այն մասին, որ Ալիշանը արձակի ասպարեզում ևս հաջողությամբ բռնել էր քննությունը: Լայն կտավի արձակին անցնելը ուներ իր միանգամայն հիմնավոր պատճառը:

Ալիշանի նպատակն էր՝ հայ ժողովրդի պատմության առավել հերոսական դրվագների վեղարվեստական վերարտադրության միջոցով հայ պատանիներին դաստիարակել հայրենասիրական ոգով: Այսպիսի նպատակի համար բանաստեղծության

ձեր չափազանց փոքր հնարավորութիւնն էր ըն-  
ձեռում: Նախորդների նպատակը եղել է ընդհա-  
նուր, վերացական հայրենասիրութեան քարոզը,  
որի համար լիովին բավական էր ներբողական  
բանաստեղծութեան ժանրը: Այնինչ Ալիշանը, մեծ  
դեպքերի ականատես բանաստեղծը, արդեն չէր  
կարող բավարարվել վերացական հայրենասիրու-  
թեան քարոզով: Ահա թե ինչու նրան անհրաժեշտ  
էր դիմել արձակի ժանրին:

Դեպքերը զարգացնելով խոսակցութեան ձևով,  
իր պատանի բարեկամին՝ Հայկակին, հեղինակը  
պատմում է երեսուներեք զանազան, բայց հերո-  
սականութեամբ նշանավոր դրվագներ հայ ժողո-  
վըրդի պատմութիւնից: Այդ երեսուներեք դրվագ-  
ներն իրար հետ կապողը Հայկակն է, որին ամե-  
նուրեք դիմում է և իր ազգային հերոսապատում-  
ներն է անում հեղինակը:

Ալիշանն իր զրուցների նյութը վերցրել է  
հայոց պատմութիւնից, որոշակի նպատակ ունե-  
նալով Հայկակի մեջ արժարժել հայրենասիրութեան  
գաղափարը, հայ ժողովրդի բազմաթիւ «Հայկակ»-  
ների մեջ վառ պահել հայրենասիրութեան կրակը:  
Սոսկելով այս մասին, Ալիշանը գրում է.

«Իմ սրտիս զվարճութենեն ավելի քու և քու  
նմանյացդ օգուտը դիտեր եմ, Հայկակ... այս քա-  
նի մը պարապո ժամերուս զրուցքը հրատարա-  
կելով: Որով երբեմն ուղեր էի այն հայրենյաց  
սրբազան զգացման մեծ վառարանն մեկ երկու

կայծեր թափել ի սիրտ քո, Հայկակ, և քեզի նման հայազգի համբակաց<sup>1</sup>: Նպատակն, ուրեմն, պարզ է, հավատարիմ մնալով այդ նպատակին, Ալիշանն իրեն հատուկ կրքոտ տոնով, առաջին իսկ տողերից սկսած, ջերմ օրհներգություններ է կարդում իր սիրելի հայրենիքին: Ահա «Հուշիկք հայրենյաց հայոց»-ի առաջին հատորի առաջին իսկ տողերը՝ «Հայրենիք... այն քիչ անուներն մեկն է այս՝ զոր գրեթե ամոթ է բացատրել բարեկիրթ և զգոն անձի մը, թեև չըլլա շատգետ կամ բանիրուն. գրեթե մտքեն առաջ սիրտն կու հասնի, կըմբռնե կիմանա զայս. կիմանա զայն, նաև երբ չի կրնար քիչ բառով կամ խոսքով բացատրել»<sup>2</sup>:

Այսպիսի հատվածներ շատ կարելի է բերել, ուր ամենուրեք հեղինակը հանդես է գալիս որպես հայրենասիրության ջերմ քարոզիչ: Այս իմաստով էլ՝ ամբողջ «Հուշիկք հայրենյաց հայոց»-ը հայրենիքի հանդես կղած բոցավառ սիրո մի փայլուն ապացույց է: Չնայած մոտ 25 տարվա զգալի տարբերությանը՝ Ալիշանի սերը դեպի իր բաղձալի հայրենիքը ոչ միայն չի մեղմացել, այլ բռնկել է նոր ուժով:

...Կարելի է մայր տեսած չլինել, մայրական գգվանքին անծանոթ լինել, կարելի է ծնողական սեր վայելած չլինել, կարելի է տուն ու տեղից հեռու, անծանոթ ու օտար միջավայրում լինել,

<sup>1</sup> «Հուշիկք հայրենյաց հայոց», հ. Ա, էջ 20:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 1:

անծանոթ լինել նույնիսկ մայրենի լեզվին, բայց  
այդ բոլորով հանդերձ անհնար է չսիրել ու խան-  
դադատանքի ամենամեծ զգացումներով չհիշել  
սիրելի հայրենիքը: Ալիշանը հավատացած է, որ  
այդ այդպես է. կարելի է ամեն ինչ անտեսել,  
բայց հայրենիքի հանդեպ ունեցած սերը՝ բնավ:  
«...Կան, որ չեն իմացեր, չեն զգացեր ինչ է ծնողի  
մը ծոց, համբույր և գգվանք, չեն սնած անոր  
կաթով, որո արյամբն ծնած են, չեն ճաշակած  
մոր մը քաղցրություն... սակայն և այնպիսիք  
ճանչցած են զսեր և զքաղցրություն հայրենյաց,  
որ համատարած և անհիշաչար ծնողքի պես կըն-  
դունի, կու գգվե ամեն համազգի ու համալեզու»<sup>1</sup>:

Այս է Ալիշանի հավատամքը, և այսպիսի  
հայրենասիրությունն Ալիշանի մոտ, տեսել ենք  
արդեն, նորություն չէր, բայց այստեղ այն հան-  
դես է գալիս նոր թափով:

Հետաքրքիր է Ալիշանի՝ նյութի վերարտա-  
դրության ձևը: Իր գրույցները ազգային հերոս-  
ների սխրագործությունների մասին նա պատմում  
է Հայկակին գյուղական խրճիթում, ավանդական  
թոնրի շուրջը նստած: Դուրսը սարսափելի  
ցուրտ է, սառնամանիք, մարդիկ դուռ-երդիկ  
պինդ-պինդ փակել ու տուն են մտել. ամենուրեք  
ոռնում է Հայկական Լեոնաշխարհի ձյունախառն  
բուքը: Իսկ գյուղական անշուք խրճիթում տաք  
է, հաճելի:

<sup>1</sup> «Հուշիկք հայրենյաց հայոց», հ. Ա, էջ 31:

«Տարվույն վերջին օրերն է. հղանակն արտուր-  
ժամանակն խավարին, թոռոմյալ, թմրյալ բնու-  
թյան վրա տարածված համասփյուռն ճերմակեն  
լույս չի ծագեր, մխիթարություն չեղներ. ձմեռն  
միշտ ցուրտ, սառն միշտ սոսկումն կազդե: Այս-  
պիսի ատեն տախուկ անկողին մը, վառած թոնրի  
մը անկյուն, արծարծուն կրակարանի մը հզերք,  
ինչ քաղցր են, ոչ միայն ծուլից, այլև օրն ի  
բուն աշխատող բանվորի մը, համեստ բարեկա-  
մաց կամ ջանասեր իմաստասիրաց: Քաղցը ըլլա  
քեզի այլ, Հայկակ, հառաջ քան մրափի մոռացու-  
թյան մեջ ընկնելդ, քանի մը ժամ ճաթոգող խա-  
րուկին լուսով՝ մեր հայրենյաց հին դիպվածները  
հետաքննել»<sup>1</sup>:

Ատեղծագործական այս ձևը հաջողությամբ  
արդարացնում է իրեն. մինչև վերջ էլ «Հուշիկք  
հայրենյաց հայոց»-ը մնում է որպես մի տեսակ  
կենդանի զրույց, որը համիշտակում է ընթերցողին:

Հայ ժողովրդի պատմությունից վերցրած  
բազմաթիվ հերոսական դեպքերից, որ հեղինակը  
պատմում է Հայկակին, վերցնենք միայն «Կար-  
միրն Վարդան»-ը, որը հաջողվածներից մեկն է,  
և որը առանձին գրքով 1878 թ. հրատարակվել է  
խտալերեն, սպա՝ քանիցս տպագրվել զանազան  
պարբերականներում: Ինչպես վերևում տեսանք,  
Ալիշանը Վարդանանց պատերազմը բանաստեղ-

<sup>1</sup> «Հուշիկք հայրենյաց հայոց», հ. Ա, էջ 373—374:

ծուծիցան նշուծ էր դարձրել դեռևս 1847 թվականին, գրելով իր անմահ «Պլյուլն Ավարայրի» պոեմը: Իրանից մոտ 20 տարի հետո, արդեն արձակով, նա կրկին անդրադառնում է նույն թեմային, և առանց վարանելու կարելի է տեսլ, որ արձակում էլ Ալիշանը բնավ չի դիջել իր դիրքերը:

Ավարայրի հերոսին՝ Վարդան Մամիկոնյանին, Ալիշանը նկարագրում է գեղարվեստական մեծ վարպետությամբ. «Եվ ահա, երևան եկավ քաջն այն, Կարմիրն այն Վարդան, ճառագայթներուն կտեկն դուրս վազող արևուն պես, իր նախապապուն Մուշեղի նման՝ ճերմակ, ճարտուկ, ճախրասլաց, բարձրապինչ, բարձրախոհինչ ձիուն վրա հարմարած կամ հեծած, կամ նստած. վասն զի ձին գրեթե սանձին անկարոտ և տիրոջը տակ ավելի թեթևացած քան թե առաջ, չես դիտեր կուխադան թե կու թռչի: Իսկ տերը թեթևությամբ ամեն դի կու դառնա, կու թռչի կու հասնի»<sup>1</sup>:

Սկսվում է կռվի արյունոտ օրը: Ճակատամարտի նկարագրության խոսքը Եղիշեին տալուց հետո Ալիշանը շարադրում է պատերազմի եղևրերգական վախճանը, Վարդանի՝ թշնամու զորաբանակների մեջ խրվելն ու դրա հետևանքով հայոց բանակի հիմնական մասսայից կտրվելը: Ոչ պակաս ուժով է պատկերված Վարդանի ու Վասակի հանդիպումը: «Եվ ահա վարած, կորած,

<sup>1</sup> «Հուշիկք հայրենյաց հայոց», հ. Ա, էջ 257:

Վասակա չար գլուխը տեսնվեցաւ իր հետ  
քշված գնդին մեջ: Վարդան արդար վրեժխնդրու-  
թյամբ դարձաւ այդ անիծապարտին վրա, որ իր  
թելադիր սատանային սիրած օձուն պես՝ սողոս-  
կելով սպրդեցաւ, փշերուն մեջ փախաւ, պահվե-  
ցաւ» (261):

Նույն ներշնչված ոճով շարունակելով պատե-  
րազմի նկարագրութիւնը, Վարդանի մահով և  
Ավարայրի ճակատամարտի մասին մի փոքր տե-  
սությամբ Ալիշանն ավարտում է հիշյալ գլուխը:  
Եւ վերջացնելով՝ նա Հայկակին խորհուրդ է տա-  
լիս սիրել հայրենիքն այնպես, ինչպես սիրում էին  
Վարդանն ու նրա համախոհները, որոնք, չխնա-  
յելով իրենց կյանքն անգամ, զոհվեցին հանուն  
հայրենիքի:

Ճիշտ է, կրօնական մտայնութիւնը, հաճախ  
նույնիսկ ուժեղ կերպով, դարձյալ զգացնել է տա-  
լիս իրեն, և այդ հարցում Ալիշանը մնում է նույն  
Մխիթարյան կրօնավորը, բայց նրա պատկերաց-  
մամբ դա մի լրացուցիչ ազդակ է հայրենա-  
սիրութեան զարգացման համար:

«Հուշիկք հայրենյաց հայոց»-ը առաջադիմա-  
կան խոշոր դեր կատարեց հայ դրականութեան  
պատմութեան մեջ: Առաջին անգամ Ալիշանն էր,  
որ, ի տարբերութիւն որոշ արեւմտահայ արձա-  
կադիրների, առաջ քաշեց հայ ժողովրդին իր ազ-  
գային հերոսապատումների վրա դաստիարակելու  
խնդիրը, հանդիսանալով պատմագեղարվեստական

արձակի հիմնադիրն ու առաջին ներկայացուցիչը արևմտահայ իրականության մեջ: Չեոնարկելով «Հայ համբակաց» հիշյալ ոգով դաստիարակելու վսեմ գործին, Ալիշանը միաժամանակ այդ հողի վրա ջերմ, առողջ հայրենասիրություն էր դարգացնում, կոչ անելով էլ ավելի սիրել, էլ ավելի ուսումնասիրել հայրենի երկիրը, նրա անցյալն ու ներկան, նրա գրականությունն ու կուլտուրան: Ահա թե ինչու գրքի գլուխներից շատերը թարգմանվեցին եվրոպական մի քանի լեզուներով, իսկ ամբողջ «Հուշիկք հայրենյաց հայոց»-ը վերահրատարակեց ևս երկու անգամ (1921 և 1944) և մինչև այսօր էլ շարունակում է հիացմունք պատճառել իր ընթերցողներին<sup>1</sup>:

Ալիշանի գեղարվեստական ստեղծագործության երրորդ շրջանը ընդգրկում է 1870-ից մինչև իր մահը՝ 1901 թվականն ընկած տարիները:

Այս ժամանակաշրջանում Ալիշանի ստեղծագործության մեջ նկատում ենք մի քանի էական փոփոխություններ: Դրանցից առաջինն այն է, որ գեղարվեստական ստեղծագործությունները չափազանց հազվադեպ են դառնում, համեմատած նախորդ շրջանի հետ: Դրա պատճառը թերևս այն կապիտալ մենագրություններն էին, որոնք սկսել էին իրար հետևից հանդես գալ, և որոնք խլում էին Ալիշանի աշխատանքային օրվա զգալի մասը,

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս մեր «Ալիշանի արձակը» հոդվածում, «Տեղեկագիր», 1958, № 12:

հաճախ էլ՝ գիշերը: Մյուս փոփոխութիւնն ալն է, որ հիմնականում թողնելով բանաստեղծական ժանրը, հեղինակն անցնում է արձակի բնագավառը: Ճիշտ է, այս ժամանակաշրջանում զանազան առիթներով նա գրում է մի քանի բանաստեղծութիւններ, բայց էականը մտնում է արձակը, ըստ որում խոհական-փիլիսոփայական արձակը: Այս շրջանի իր գեղարվեստական ստեղծագործութիւնների մեջ Ալիշանը մեզ ներկայանում է որպէս ջերմեռանդ մի կրօնավոր, որը միայն մեկ նպատակ է հետապնդում, այն է՝ ընթերցողների մեջ ամբապնդել հավատը, կրօնական աշխարհայացքը: Այս տեսակետից բնորոշ է 1887 թվականին գրած «Մասն իմ բարի» բանաստեղծութիւնը, ուր հեղինակը իր և իր նախորդների գործունեութիւնը քննելուց հետո հանգել է այն մտքին, որ այդ ամենը են «սնտախք յոյժ բազում».

... Մտի, տեսի զաշխարհս, ու ահա՛նդ հուպ թողում  
Քննեցի զգործ նախնեաց-սնտախք յոյժ բազում.  
Եւ կամիմ նախ, որ յոյժ սաստիկ զգամ սէր,  
Բայց ոչ զանձին, այլ որ յԱստուած եւ յընկեր  
Գեղեցկութիւն տարփամ: Ըստոյդ զեղ և զարդ՝  
Հաստչին սլատկերն է յիս սլահեալ անաղարտ:

Այսպիսին է դարձել Ալիշանի աշխարհայեցողութիւնը:

Վերը տեսանք նրա առաջադիմական դերը լեզվի հարցում: Իր ստեղծագործութիւնն երբորդ շրջանում, երբ, տրամաբանորեն դատելով, պետք

է որ շարունակեր իր իսկ սկսած գործը, այսինքն՝ աշխարհաբար լեզվով և աշխարհիկ բովանդակութեամբ նորանոր երկեր ստեղծեր, Ալիշանը միայն նահանջում էր իր դիրքերից դեպի գրաբարը: Այս շրջանի գործերի անվիճելիորեն գերակշիռ մասը գրված են այնպիսի խրթին գրաբարով, որ առանց լուրջ ճիգերի անկարելի է հասկանալ:

Չենք խորանում այս շրջանում Ալիշանի գրած մյուս երկերի վերլուծութեան մեջ: Դրանք զուտ կրոնական բնույթի գործեր են: Թվենք մի քանիսի վերնագրերը. «Աղօթք Աբեղայի» (1878), «Ոսկեգիրք հրահանգ խոնարհութեան» (1878), «Ճառք հոգևորք վասն միանձանց» (1904) և այլն:

Սակայն սրանք և վերևում հիշատակված այս տիպի գործերը չեն, որ բնորոշում են Ալիշանին: Լինելով կրոնական միաբանութեան անդամ, հասկանալի է, որ նա չէր կարող չգրել այդ կարգի գործեր, ուսումնասիրություններ, բազմաթիվ բանաստեղծություններ (տես «Նուագք»-ի առաջին հատորը), որոնք այսօր բացարձակապես արժեքազուրկ են:

Ալիշանը հիշվում է և պիտի հիշվի որպես ականավոր, եվրոպական հռչակ ունեցող գիտնական, որպես կրքոտ հայրենասիրական բանաստեղծությունների հեղինակ, որոնք նրան դարձրին հայ պոեզիայի Նահապետը: Եվ վերջապես՝ Ալիշանի գրական փառքի անկապտելի մասն են կազմում նրա ղեղարվեստական արձակ գործերը,

հատկապես «Հուշիկք հայրենյաց հայոց»-ի երկու  
հատորները, որոնց վրա հայ ժողովրդի բազմա-  
թիվ սերունդներ են դաստիարակվել:

Ալիշանն իր հաստատուն տեղն ունի հայ  
գրականության և հայագիտական մտքի պատմու-  
թյան մեջ:

Ղ. ԱԼԻՇԱՆԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ-  
ՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝  
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ,

1852

«Մաղկաբաղ քերթողաց անգղիացւոց» (հայերեն ու անգլե-  
րեն տեքստերը համատեղ), Վենետիկ, 233 էջ, նույնը՝  
1887 թ., նույնը՝ 1907 թ.:

Ա. Լիկուրիոս «Պատրաստութիւն մահու», Վենետիկ, 318 էջ  
(թարգմանություն իտալերենից), նույնը՝ 1885 թ.,  
ապա՝ 1893 թվականներին:

«Հայոց երգք ոամկականք» (հայերեն ու անգլերեն տեքս-  
տերը համատեղ), Վենետիկ, 85 էջ, նույնը՝ 1867 թ.:

1853

«Աշխարհագրութիւն Հայաստանի», Վենետիկ, 100 էջ:

«Սովերբ Հայկականք» (հրատարակությունն ընդհատումնե-  
րով շարունակվում է մինչև 1934 թվականի վերջերք,  
ընդամենը 24 հատոր: Բացի վերջին երկու հատորից,  
մյուսներն Ալիշանինն են):

«Քաղաքական աշխարհագրութիւն Եկարացոյց պատկերօք»,  
Վենետիկ, 800 էջ:

«Նմանութիւն սրբոյն Արոյիսիոսի Գոնգակայ պաշտպանի մանկանց», Վենետիկ, 174 էջ, նույնը՝ 1932 թ.:

### 1855

«Տեղագիր հայոց մեծաց», Վենետիկ, 105 էջ: Նույնը՝ Քրահաներեն, Դյուլյորիեի թարգմանութեամբ, 1869 թ.:

### 1857

«Նուագը» (1-ին և 2-րդ հատորները), Վենետիկ:  
Ա հատոր «Մանկունի», 225 էջ, վերահրատարակված 1881 թ.,  
Բ հատոր «Մաղրունի», 268 էջ, վերահրատարակված 1885 թ.:

### 1858

«Նուագը» (3-րդ, 4-րդ, 5-րդ հատորները), Վենետիկ:  
Գ հատոր «Հայրունի», 302 էջ, վերահրատարակված 1867  
և 1927 թ.:

Դ հատոր «Տէրունի», 286 էջ, վերահրատարակված 1888 թ.,  
Ե հատոր «Տխրունի», 236 էջ, վերահրատարակված 1886 թ.:

«Ռուղոլֆ Հավերդունի» (Հ. Բիքերի շափածո վիպասանութեան թարգմանութեամբ, համատեղ տրված են հայերեն և գերմաներեն տեքստերը), Վենետիկ, 500 էջ:

### 1860

«Իտալիա» (Բայրոնի «Չայլդ Հարոլդ» պոեմի 4-րդ երգի թարգմանութեամբ, համատեղ տրված են հայերեն և անգլիերեն տեքստերը), Վենետիկ, 146 էջ, նույնը անփոփոխ՝ 1889 և 1891 թվականներին:

### 1862

«Վարդանայ վարդապետի հաւարումն պատմութեան», (տեքստաբանական աշխատանքները, առաջաբանը և ծանոթագրութեանները Ալիշանի), Վենետիկ, 184 էջ:

## 1864

«Կիրակոս պատմիչ» (տեքստարանական աշխատանքները, առաջաբանը և ծանոթագրությունները Ղ. Ալիշանի), Վենետիկ, 265 էջ:

## 1865

«Հաղորդասեր հոգի» (Մ. Բարկանիի գրքի՝ Իտալերենից հատարված թարգմանությունը), Վենետիկ, 462 էջ:

## 1866

«Նվեր տղայոց», Վենետիկ, 58 էջ: Նույնը անփոփոխ՝ 1886 թ., նույնը լրացումներով՝ 1895 թ.:

## 1868

«Աբգարի բուդր երկասիրուրիւն Լաբուրնա ասորի մատենագրի» (անգլերենից թարգմանությունը, առաջաբանն ու ծանոթագրություններն Ալիշանի), Վենետիկ, 71 էջ, նույնը՝ Ֆրանսերեն, նույն թվականին:

## 1869

«Խոսքով Անձկացի» (առաջաբան և ծանոթագրություններ), Վենետիկ, 67 էջ:

«Հուշիկք հայրենյաց հայոց» (1-ին հատոր), Վենետիկ, 540 էջ:

## 1870

«Հուշիկք հայրենյաց հայոց» (2-րդ հատոր), Վենետիկ, էջ 574, վերահրատարակված 1921 թ. երկու հատորները միասին, 1944 թ. (ամբողջ «Հուշիկք»-ը մաս-մաս հրատարակվել է «Բազմավեպ»-ում, 1862 թվականի հունվարից սկսած):

«Նշմարք եւ նշխարք Հայաստանի», Վենետիկ (նույն թվականին ունեցել է կրկին տպագրութիւն. 1872 թվականին թարգմանվել է ֆրանսերեն, 1875 թվականին՝ անգլերեն, 1893 թվականին՝ գերմաներեն: Հայերենը կրկին հրատարակվում է 1902 թվականին: Վենետիկ, 110 էջ):

«Բնագիտութիւն Հայաստանի» (ֆրանսերեն), Վենետիկ:

### 1871

«Ջանգալ» (Շիլլերի համանուն գործի թարգմանութիւնը թարգմանչի խորհրդածութիւններով հանդերձ), Վենետիկ, 22 էջ:

### 1873

«Շնորհալի և պարագա յուր», Վենետիկ, 540 էջ (մաս-մաս հրատարակվում էր «Բազմավեպ»-ում՝ 1872 թվականի հունվարից սկսած):

### 1874

«Ընդ եղեւնեաւ», Վենետիկ, 72 էջ: Նույնը աշխարհաբար թարգմանութիւնով՝ 1930 թ., նույնը մասնակի կրճատումներով՝ 1944 թ., 110 էջ:

«Բնար ամերիկյան» (անգլերեն և հայերեն տեքստերը համատեղ), Վենետիկ, 85 էջ:

### 1876

«Սմբատ Դուրդաստաբլ հայոց, և անսիզք Անտիոքայ» (հայերեն ու ֆրանսերեն, համատեղ տեքստերով, առաջաբանով ու ծանոթագրութիւններով), Վենետիկ, 93 էջ:

### 1877

«Դիրք վաստակոց», Վենետիկ, 263 էջ:

## 1878

«Ոսկեգիրք կամ հրահանգ խոնարհութեան», *Վենետիկ*, 86 էջ:

## 1881

«Շիրակ, տեղագրութիւն պատկերացոյց», *Վենետիկ*, 192 էջ:

## 1885

«Սիսուան և Լեոն Մեծագործ», *Վենետիկ*, 592 էջ, նույնը՝  
նույն թվականին, համառոտ, 177 էջ, նույնը ֆրանսերեն՝  
1899 թ., իսկ 1888 թ. «Լեոն Մեծագործ»  
գլուխն առանձին թարգմանվում է ֆրանսերեն:

## 1890

«Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց», *Վենետիկ*, 590 էջ:

## 1893

«Սիսական», *Վենետիկ*, 562 էջ:

## 1895

«Հայբուսակ, կամ հայկական բուսաբանութիւն», *Վենետիկ*,  
698 էջ (մաս-մաս հրատարակվում էր «Բազմա-  
վեպ»-ում, 1893 թվականի մարտից սկսած):

«Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց», *Վենետիկ*,  
557 էջ (մաս-մաս հրատարակվում էր «Բազմա-  
վեպ»-ում՝ 1894 թվականի հունվարից սկսած):  
Նույնը՝ 1909 թ.:

## 1896

«Վամենից տարեգիրք հայոց», *Վենետիկ*, 274 էջ:

«Հայ-Վենետ», *Վենետիկ*, 560 էջ (1-ին մասը 1893

Թվականին լույս էր տեսել իտալերենի չափերենը  
մաս-մաս հրատարակվում էր «Բաղմավեպ»-ում՝ 1890  
թվականի սեպտեմբերից սկսած): Նույնը իտալերեն,  
համառոտ թարգմանությամբ, նույն թվականին, 224 էջ:

### 1901

- «Հայաստան», Վենետիկ, 800 էջ (նույնը փոքրադիր, 4  
հատորով: Աշխատությունն ավարտվում է 1902 թ.  
սկզբներին, երբ արդեն չկար Ալիշանը:)
- «Արշալոյս քրիստոնեութեան հայոց», Վենետիկ, 386 էջ  
(մաս-մաս հրատարակվում էր «Բաղմավեպ»-ում՝  
1900 թվականի մայիսից սկսած):

### 1904

- «Հայաստան առաջ քան՝ զլինելն Հայաստան», Վենետիկ,  
290 էջ:
- «Ճառք հոգևորք վասն միանձանց», Վենետիկ, 696 էջ:



ՍՈՒՐԵՆ ԱՐՇԱՎԻՐԻ ՇՏԻԿՑԱՆ

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՊՈՆԶԻԱՆ

Պատ. խմբագիր՝ Ա. Մ. ԻՆՃԻԿՅԱՆ  
Հրատ. խմբագիր՝ Ա. Հ. ՇԱՀՔԱՄԵԱՆ  
Նկարչական ձևավորումը Կ. Թ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆԻ  
Տեխն. խմբագիր՝ Մ. Մ. ԿԱՓԼԱՆՅԱՆ  
Վերատպագր սրբագրիչ՝ Օ. Ա. ԱՐՉՈՒՄԷԼՅԱՆ

---

ՎՖ 05424. Հրատ. 1700, պատվեր 229

ԽՀԽ 546. տիրույթ 3000

---

Հանձնված է արտադրություն 20 V 1959 թ.

Ստորագրված է տպագրություն 22 VIII 1959 թ.

Բույր 70 × 92<sup>1</sup>/<sub>2</sub> Տպագր. 6<sup>1</sup>/<sub>4</sub> ժամ.

† 1 ներդիր, հրատ. 2,92 մամ. Գինը 1 ս. 50 կ.

---

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն տպարան,  
Երևան, Արտվյան 124:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0079125

A  $\frac{I}{319}$